ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» մայիսի 2023 թվականի № 1360Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 8-ՐԴ ՇԱՐՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՈՒՐԳԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 61.65 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ 79.79 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի №806–Ա որոշումը ու քաղաքացի Գուրգեն Մխիթարյանի լիազորված անձ Արմեն Մխիթարյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված № 9895 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Ղուկասյան փողոց, 8-րդ շարքի հարևանությամբ գտնվող քաղաքացի Գուրգեն Մխիթարյանին պատկանող 61.65 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությանը և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա 79.79 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ղ. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 7-ՐԴ ՇԱՐՔ, 3 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ

30.05.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«29» մայիսի 2023 **թվականի** N 1359Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼԵՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ 4/7 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Լենվել Սարգսյանի (ՀՎՀՀ՝ 57355287, գրանցման ամսաթիվը՝ 17.01.2020 թ.) 2023 թվականի մայիսի 25-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի մայիսի 25-ին 9943-2023 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Լենվել Սարգսյանին Գյումրի քաղաքի Գ. Նժդեհի 4/7 հասցեում իրականացնել հանրային սննդի կազմակերպում և իրացում:
2. Թույլտվության գործողության վերջնաժամկետ սահմանել մինչև 2023 թվականի հունիսի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Լենվել Սարգսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 29 >> մայիսի 2023 թվականի N 1358-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՉԱԽՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, << Համայնքային ծառայության մասին >> օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Իր ծառայողական պարտականությունները որակյալ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմենուհի Վարուժանի Չախոյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:
2.Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմենուհի Վարուժանի Չախոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.05.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«29» մայիսի 2023 **թվականի** N 1357-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳՈՌ ԴՈՒՐԳԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ 23 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Գոռ Դուրգարյանի 2023 թվականի մայիսի 24-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի մայիսի 24-ին 9830-2023 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Գոռ Դուրգարյանին Գյումրի քաղաքի Ե. Չարենցի 23 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի հունիսի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Գոռ Դուրգարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«29» Մայիս 2023 թվականի N 1356 Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆԱՀԻՏ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ 7/17 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Անահիտ Սիմոնյանի 2023 թվականի մայիսի 26-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի մայիսի 26-ին 10160-2023 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Անահիտ Սիմոնյանին Գյումրի քաղաքի Անի թաղամաս 7/17 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի հունիսի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Անահիտ Սիմոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.05.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«29» «Մայիս» 2023 թվական N 1355-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 521 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Արմաղան Ռոբերտի Մարտիրոսյանը (անձնագիր՝ AR0501969, տրված՝ 06.11.2017թ., 064 կողմից) Հայաստանի Հանրապետության Գյումրու քաղաքապետի 1998 թվականի օգոստոսի 24-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 521 որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) փոփոխություններ կատարելու խնդրանքով:

Որոշման մեջ տեղի են ունեցել վրիպակներ՝ մասնավորապես որոշման 5–րդ մասի 1–ին կետում Լյովա Ավետիքի Մեսրոպյանի անունը «Լեվոն»–ի փոխարեն գրվել է «Լյովա» (հիմք՝ անձնագիր BA2653753, տրված՝ 12.02.2016 թ., 064 կողմից), 3-րդ կետում Մեսրոպյան Արտյոմ Լյովայի հայրանունը «Լեվոնի» փոխարեն գրվել է «Լյովայի» (հիմք՝ անձնագիր 70 22 108133, տրված՝ 08.07.2022 թ., 710-002 կողմից):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, 1-ին մասի, 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Արմաղան Ռոբերտի Մարտիրոսյանի 2023 թվականի մայիսի 05-ի դիմումը՝ (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված՝ թիվ N 9912 թվագրությամբ)՝ **որոշում եմ.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 1998 թվականի օգոստոսի 24-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ N 521 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 5–րդ մասի 1-ին կետում՝ Մեսրոպյան Լյովա Ավետիքի անվանման մեջ՝ «Լյովա» բառը փոխարինել «Լեվոն» բառով:
2. Որոշման 5–րդ մասի 3-րդ կետում՝ Մեսրոպյան Արտյոմ Լյովայի անվանման մեջ՝ «Լյովայի» բառը փոխարինել «Լեվոնի» բառով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արմաղան Ռոբերտի Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.05.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» մայիսի 2023 **թվականի** N 1354-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՈԼԵՅԲՈԼԻ 2009-2010ԹԹ. ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության վոլեյբոլի 2009-2010թթ. պատանիների 2023 թվականի մայիսի 31-ից հունիսի 4-ը Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով վոլեյբոլի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի մայիսի 29-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության վոլեյբոլի 2009-2010թթ. պատանիների առաջնությանը մասնակցելու համար 2023 թվականի մարտի 29-ից ապրիլի 2-ը քաղաք Երևան գործուղել թվով 12 մարզիկի և 2 մարզիչի(համաձայն հավելվածի):
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թ.
----------- N ----------որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Վոլեյբոլի 2009-2010թթ. պատանիների առաջնությանը **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

1. Նորյան Արմեն – մարզիկ
2. Դարբինյան Դավիթ – մարզիկ
3. Աղանյան Վարուժան – մարզիկ
4. Պետրոսյան Օնիկ – մարզիկ
5. Իգիթյան Ռաֆիկ – մարզիկ
6. Գրիգորյան Մկրտիչ – մարզիկ
7. Պետրոսյան Շավարշ – մարզիկ
8. Պառվանյան Սարգիս – մարզիկ
9. Դեմիրճյան Արման – մարզիկ
10. Դեմիրճյան Վարդան – մարզիկ
11. Առաքելյան Մարտին – մարզիկ
12. Սարգսյան Վահագն – մարզիկ
13. Մանուկյան Եղիշե – մարզիչ
14. Տիգրանյան Կարեն – մարզիչ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«29» դեկտեմբեր 2023 թվականի №1353Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, 236/319 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎԱՌԱԾ ՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 70.39 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 46.33 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ, 24.06 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 04-ի №1112–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, 236/319 հասցեագրությամբ հաշվառած տնակի զբաղեցրած 70.39 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1220-0037) և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 46.33 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությանը, 24.06 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակին տրամադրել հասցե՝

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Շ. ՏԱԼՅԱՆ ՓՈՂՈՑ, 5/12 ՀՈՂԱՄԱՍ:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» մայիսի 2023 թվականի N 1352-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N 1235-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30 -Ի N 805-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի <<Քաղաքացի Խանում Խաչատրյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց 3-րդ շարք N 36 հասցեի տան ինքնակամ փակված 1 դուռը, 1 պատուհանը , ինքնակամ բացված 2 պատուհանը օրինական ճանաչելու և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 17,36 քառ.մ մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 805-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի <<Քաղաքացի Խանում Խաչատրյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց 3-րդ շարք N 36 հասցեի տան ինքնակամ փակված 1 դուռը, 1 պատուհանը , ինքնակամ բացված 2 պատուհանը օրինական ճանաչելու և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 17,36 քառ.մ մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 805-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վերնագրից, նախաբանից, որոշման 2-րդ կետից հանել <<ինքնակամ բացված 2(երկու) պատուհանը>> թիվը և բառերը.

2) որոշման 2-րդ կետում <<10900 (տասը հազար ինը հարյուր) >> թիվը և բառերը փոխարինել <<5450(հինգ հազար չորս հարյուր հիսուն)>> թվով և բառերով:

2. Գյումրի համայնքի ղեկավարի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի N 805-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին>> 2023 թվականի մայիսի 18-ի N 1235-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

29.05.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«26» մայիսի 2023 թվականի N 1351 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԼՈՒՍԱՍՏՂԻԿ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԻԼԻԹ ԿԱՐԼԵՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Լիլիթ Կարլենի Ավետիսյանի 2023 թվականի մայիսի 24-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի « Լուսաստղիկ-մսուր մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Կարլենի Ավետիսյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2023 թվականի հունիսի 5-ից:
2. Ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր՝ 2023 թվականի հունիսի 5-ից մինչև 2023 թվականի հուլիսի 10-ը ներառյալ:
3. Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Լիլիթ Կարլենի Ավետիսյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության մեթոդիստ Սահականուշ Էդուարդի Ձվակերյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլիթ Կարլենի Ավետիսյանին և Սահականուշ Էդուարդի Ձվակերյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

26.05.2023

Հ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 26 >> Մայիսի 2023 թվականի N 1350 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆԱԶԵԼԻ ՋԻՈՎԱՆԻԻ ԷԼԲԱԿՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163–րդ հոդվածով և հիմք ընդունելով Նազելի Ջիովանիի Էլբակյանի 2023 թվականի մայիսի 25-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Նազելի Ջիովանիի Էլբակյանին տրամադրել 2022 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2023 թվականի հունիսի 01-ից:

2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր՝ 2023 թվականի հունիսի 01-ից 14-ը ներառյալ:

3. Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Նազելի Ջիովանիի Էլբակյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի պետի տեղակալ Գրետա Վոլոդյայի Ջանոյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նազելի Ջիովանիի Էլբակյանին և Գրետա Վոլոդյայի Ջանոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

26.05.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» մայիսի 2023 թվականի N 1349-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 04-Ի N 263-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 04-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը նոր խմբագրությամբ հաստատելու և Գյումրի համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 22-ի N 516-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին » N 263-Ա որոշման 1-ին կետով հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքի անշարժ գույքի կառավարման բաժնի պետի տեղակալի համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը՝ հավելված N 17, շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

26.05.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք. Գյումրի 2023թ.

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2023 թվականի մայիսի 26 -ի N 1349- Ա որոշման

Հավելված N 17
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2020 թվականի փետրվարի 04 -ի N 263 -Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի (այսուհետ՝ բաժին) պետի տեղակալի, 2.2-20

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետին

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետը կամ գլխավոր մասնագետը

1.4. Աշխատավայրը

Գյումրու համայնքապետարան

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները Բաժնի պետի տեղակալը՝

1) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով,

2) իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում բաժնի պետին,

3) անհրաժեշտության դեպքում, բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին,

4) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում

նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ,

5) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին,

6) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը,

7) մասնակցում է Գյումրի համայնքի համատիրությունների գործունեության վերահսկողության իրականացման աշխատանքների կատարմանը,

8) կատարում է ՀՀ օրենսդրությամբ և համայնքի ավագանու կողմից սահմանված կարգերի համապատասխան բնակարանների կարիքավորների հաշվառման, բնակարանների բաշխման և համայնքային սեփականություն հանդիսացող բնակֆոնդի տրամադրման համար անհրաժեշտ աշխատանքներ,

9) կատարում է համայնքում լքված բնակարանների հաշվառման աշխատանքները և դրանց վերաբերյալ ներկայացնում համապատասխան առաջարկություններ,

10) կատարում է համայնքային սեփականություն հանդիսացող բնակֆոնդի վիճակի ուսումնասիրություններ,

11) համատիրությունների նախագահների հետ կատարում է տեղեկագրերում ամփոփված տվյալների ուսումնասիրություն, վերլուծություն,

12) համատիրությունների հաշվեկշռում գտնվող շենքերում կատարում է տեխնիկական մոնիթորինգ,

13) մասնակցում է բնակարանային ֆոնդի պահպանման և շահագործման աշխատանքների կատարմանը,

14) մասնակցում է բնակարան ստացած ընտանիքների ժամանակավոր կացարանների տեղահամնան աշխատանքների կատարմանը,

15) մասնակցում է համայնքի սեփականություն հանդիսացող բնակարաններն ապօրինի զբաղեցրած անձանց վտարման հետ կապված աշխատանքների կատարմանը,

16) մասնակցում է բաժնի ներքին գործավարության,փաստաթղթերի շրջանառության և պահպանման աշխատանքների կատարմանը,

17) սահմանված կարգով նախապատրաստում և ներկայացնում է համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների ,աշխատակազմի քարտուղարի հրամանների, ոլորտին վերաբերող ծրագրային փաստաթղթերի, պետական մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց գրությունների նախագծեր,կազմում է համայնքի զարգացման ծրագրի համապատասխան ոլորտի նախագիծը և մասնակցում է համայնքային սեփականության գույքագրման աշխատանքներին,

18) կատարում է համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները,ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ,այլ իրավական ակտերով նախատեսված այլ աշխատանքներ,

19) իրականացնում է օրենքով, իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

Բաժնի պետի տեղակալն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

3. Կազմակերպական շրջանակը

3.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

1) Բաժնի պետի տեղակալը իրեն ենթակա աշխատողներ չունի:

2) բաժնում համակարգում է, ինչպես նաև բաժնի պետի հանձնարարությամբ իրեն հանձնարարված բնագավառում կազմակերպում և ծրագրում է աշխատանքները,

3) օժանդակում է իր բաժնի ավելի ցածր պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողների աշխատանքներին, ինչպես նաև մասնակցում է բաժնի աշխատանքների ծրագրմանը,

4) կատարում է բաժնի պետի հանձնարարականները,

5) պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները, տրված հանձնարարականները և իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ վերազանցելու համար:

3.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Բաժնի պետի տեղակալը մասնակցում է որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը, ինչպես նաև բաժնի պետի հանձնարարությամբ լուծում է հիմնախնդիրներ:

3.3. Շփումները և ներկայացուցչությունը

1) բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում,

2) աշխատակազմի ներսում շփվում է աշխատակազմի քարտուղարի, աշխատակազմի այլ աշխատողների հետ, այդ թվում՝ այլ բաժինների աշխատողների և պաշտոնատար անձանց հետ ու բաժնի պետի հանձնարարությամբ հանդես է գալիս որպես ներկայացուցիչ՝ իր լիազորությունների շրջանակներում,

3) բաժնի պետի հանձնարարությամբ աշխատակազմից դուրս իր լիազորությունների շրջանակներում շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության մյուս համայնքների և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով և այլն:

3.4. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Բաժնի պետի հանձնարարությամբ բացահայտում, վերլուծում և գնահատում է մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում բաժնի պետին:

4. Պաշտոնին ներկայացվող պահանջները

4.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

4.2. Մասնագիտական գիտելիքները և հմտությունները

1) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Արխիվային գործի մասին», «Լեզվի մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին», «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական

այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

2) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,

3) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

4) տիրապետում է ռուսերեն լեզվին (ազատ):

4.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

5.Համայնքային ծառայության դասային աստիճանը

Բաժնի պետի տեղակալին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«26» դեկտեմբեր 2023 թվականի № 1348-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 19/5 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 8.18 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0335-0007) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Վազգեն Սարգսյան փողոց, 19/5 հասցեի հողամասի հարևանությամբ գտնվող 8.18 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0335-0007) տրամադրել հասցե՝

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Վ. ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 19/17 ՀՈՂԱՄԱՍ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«26» Դեկտեմբեր 2023 թվականի № 1397-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԱՆՏԱՌԱՎԱՆԻ 5-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ, 74/4 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0425-0020) ԵՎ ԱՆՏԱՌԱՎԱՆԻ 5-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ, 76/3 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0425-0019) ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Անդրանիկ Մկրտչյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №9657 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Անտառավանի 5-րդ թաղամաս, 74/4 (կադաստրային ծածկագիր 08-001-0425-0020) և Անտառավանի 5-րդ թաղամաս, 76/3 (կադաստրային ծածկագիր 08-001-0425-0019) հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԱՆՏԱՌԱՎԱՆԻ 5-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ, 74/4:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» մայիսի 2023 **թվականի** N 1346-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի № 1003-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 20-ի «Քաղաքացիներ Գեղամ Պատվականի Կարապետյանին (3/6), Հասմիկ Լեոնիդի Կարապետյանին (1/6), Պատվական Գեղամի Կարապետյանին (1/6), Արմինե Գեղամի Կարապետյանին (1/6) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց № 75/2 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 162.23 քառակուսի մետր արտաքին (122.2 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունն օրինական ճանաչելու մասին» № 1003-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 20-ի «Քաղաքացիներ Գեղամ Պատվականի Կարապետյանին (3/6), Հասմիկ Լեոնիդի Կարապետյանին (1/6), Պատվական Գեղամի Կարապետյանին (1/6), Արմինե Գեղամի Կարապետյանին (1/6) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց № 75/2 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 162.23 քառակուսի մետր արտաքին (122.2 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունն օրինական ճանաչելու մասին» № 1003-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Նախաբանում «2021A53219» թվերը և տառերը փոխարինել «2021A53219» թվերով և տառերով:

24.05.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«26» Դեկտեմբեր 2023 թվականի № 1345 Ա

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ, 58Ա ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Մանուկյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №9885 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Ժառանգության իրավունքով քաղաքացի Արմեն Մանուկյանին պատկանող Գյումրի քաղաք, 26 Կոմիսարների փողոց, 58ա բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը վերահասցեավորել՝

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ, 58/5 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«26» Մայիս 2023 թվականի № 1349-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 8-ՐԴ ՇԱՐՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՈՒՐԳԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 34.04 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ 53.90 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 20-ի №10121–Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Ղուկասյան փողոց, 8-րդ շարքի հարևանությամբ գտնվող քաղաքացի Գուրգեն Մխիթարյանին պատկանող 34.04 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությանը և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա 53.90 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ղ. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 8-ՐԴ ՇԱՐՔ, 14/2 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ:

26.05.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» մայիսի 2023 թվականի N 1343-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ն. ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ N 127/3 ՀԱՍՑԵԻ 270,9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ն. Ղորղանյան փողոց N 127/3 հասցեի 270,9 (երկու հարյուր յոթանասուն ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը համաձայն Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխել նշված հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի և նկատի ունենալով ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալի 2022 թվականի մայիսի 05-ի N02.1//03452-2022 գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Ն. Ղորղանյան փողոց N 127/3 հասցեի 270,9 (երկու հարյուր յոթանասուն ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակության:

26.05.2023

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«26» դեկտեմբեր 2023 թվականի № 1342-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ, 27 ՇԵՆՔ, 5 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2641653) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Մերուժան Վարդանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №9643 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Երևանյան խճուղի, 27 շենք, 5 բնակարան հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2641653) վերահասցեավորել՝

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ, 9Ա ՇԵՆՔ, 5 ԲՆԱԿԱՐԱՆ:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մայիսի 2023 **թվական** N 1341-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆ-ՇԻՆ ՓՈՂՈՑ 1 ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ԹԻՎ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ճան-Շին փողոց 1 հանրակացարանի թիվ 10 հասցեի 48.82 (քառասունութ ամբողջ ութսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային բնակելի ֆոնդի տունը փաստացի զբաղեցնում է 67.96 (վաթսունյոթ ամբողջ իննսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի N 1089-Ն, 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշումների, ղեկավարվելով «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Գյումրի համայնքի Ճան-Շին փողոց 1 հանրակացարանի թիվ 10 հասցեի 48.82 (քառասունութ ամբողջ ութսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող բնակելի ֆոնդի տան ու դրա փաստացի զբաղեցրած 67.96 (վաթսունյոթ ամբողջ իննսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը ներկայացնել պետական գրանցման:

Недействительная подпись

X

2023թիվ Գյումրի համայնք **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» Դեկտեմբեր 2023 թվականի № 1340.Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՆՈՒՇՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 54.15 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0458-0016) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Մանուշյան փողոցի հարևանությամբ գտնվող 54.15 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0458-0016) տրամադրել հասցե՝

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Մ. ՄԱՆՈՒՇՅԱՆ ՓՈՂՈՑ, 7/12:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» Դեկտեմբեր 2023 թվականի № 1339-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԿԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ, 25/1 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐՎԲ 08-001-0240-0027) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ Գևորգ Բաբայանի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված №9490 թվագրմամբ), չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման և հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 190751.3 քմ մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԿԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ, 25/1:
2. 9023.0 քմ մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԿԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ, 25/2:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» Մայիսի 2023 թվականի N 1338-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Գյումրի համայնքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Մենուա Մկրտչյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Նարեկ Բեգզադյան - Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական,
3) Շուռիկ Հակոբյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետ,
4) Լևոն Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գործակալ
5) Օլգա Գևորգյան - Գյումրու համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.05.2023

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» մայիսի 2023 **թվականի** N 1337-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Գյումրի համայնքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման աշխատանքների ձեռքբերման նպատակով սահմանել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. Սուրեն Ջանոյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի պաշտոնակատար,
բ. Արտուշ Ավագյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.05.2023

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» Մայիսի 2023 թվականի N 1336-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման ծառայության ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Շուռիկ Հակոբյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետ

Հանձնաժողովի անդամներ՝

2) Նարեկ Բեգզադյան - համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական,
3) Խաչատուր Սուլթանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ
4) Օլգա Գևորգյան - Գյումրու համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ
5) Լևոն Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գործակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից

24.05.2023

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» մայիսի 2023 **թվականի** N 1335-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման ծառայության ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝
ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Մենուա Մկրտչյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,
բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Ռոբերտ Եգորյան – համայնքի ղեկավարի խորհրդական

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.05.2023

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 25 » մայիսի 2023 թվականի N - 1334-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բյուջեի միջոցների նպատակային օգտագործման անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 2022 թվականի դեկտեմբերի 26-ի N 266-Ն որոշման 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի NN 3,4 հատվածներում կատարել վերաբաշխումներ՝ համաձայն NN 1,2 հավելվածների:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված վերաբաշխումները կատարել օրենքով սահմանված կարգով:

Կ.ԲԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք. Գյումրի

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի 2023թ հոկտեմբերի 25-ի
N 1334-Ա որոշման

ՀԱՏՎԱԾ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝		Ըստ եռամսյակների		
				վարչական մասը	ֆոնդային մասը	2-րդ	3-րդ	4-րդ
1	2	3	4	5	6	8	9	10
4000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող4050+տող5000+տող 6000)		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4050	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ (տող4100+տող4200+տող4300+տող4400+տող4500+ տող4600+տող4700)	x	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111				-9,132.7	-2,321.4	
4238	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239				4,561.3	8,980.0	8,980.0
4261	Գրասենյակային նյութեր և հագուստ	4261				2,539.7	1,289.7	5,000.0
4268	Հատուկ նպատակային այլ նյութեր	4269		X		2,031.7	1,031.7	4,472.0

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թ.
N 1238-Ա որոշման

ՀԱՏՎԱԾ 4

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	հոդված	Ընդամենը (ս.7+ս.8)	այդ թվում՝		Ըստ եռամյակների		
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	2-րդ	3-րդ	4-րդ
1	2	3	4	5		6	7	8	8	9	10
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+ տող2600+տող2700+տող2800+տող2900+տող3000+ տող3100)		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
2100	01	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2110+տող2120+տող2130+տող2140+տող2150+ տող2160+տող2170+տող2180)		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
2110	01	1	0	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
				Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111				-9,132.7	-2,321.4	
				Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239				4,561.3	8,980.0	8,980.0
				Գրասենյակային նյութեր և հագուստ	4261				2,539.7	1,289.7	5,000.0
				Հատուկ նպատակային այլ նյութեր	4269			0.0	2,031.7	1,031.7	4,472.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» Հոկտեմբեր 2023 թվականի N 1333-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Կ. ՀԱԼԱԲՅԱՆ ՓՈՂՈՑ 1/1 ՇԵՆՔԻ N 1/2 ՀԱՍՑԵԻ ՆԿՈՒՂԻ, Կ. ՀԱԼԱԲՅԱՆ ՓՈՂՈՑ 1/1 ՇԵՆՔԻ N 19 ՀԱՍՑԵԻ ՁԵՂՆԱՀԱՐԿԻ, Կ. ՀԱԼԱԲՅԱՆ ՓՈՂՈՑ 1/1 ՇԵՆՔԻ N 20 ՀԱՍՑԵԻ ՁԵՂՆԱՀԱՐԿԻ, Կ. ՀԱԼԱԲՅԱՆ ՓՈՂՈՑ 1 ՇԵՆՔԻ N 19 ՀԱՍՑԵԻ ՁԵՂՆԱՀԱՐԿԻ, Կ. ՀԱԼԱԲՅԱՆ ՓՈՂՈՑ 1 ՇԵՆՔԻ N 20 ՀԱՍՑԵԻ ՁԵՂՆԱՀԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասի 1-ին փողոց 12 հասցեի բնակելի համալիրը և մանկապարտեզը սեփականության իրավունքով պատկանում է «Հայաստան» համահայկական հիմնադրամ ՀՄԴ-ին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N14122022-08-0083 վկայական):

«Հայաստան» համահայկական հիմնադրամ ՀՄԴ-ի գործադիր տնօրեն Հայկակ Արշամյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով «Հայաստան» համահայկական հիմնադրամ ՀՄԴ-ին պատկանող Գյումրի քաղաքի Կ. Հալաբյան փողոց 1/1 շենքի N 1/2 հասցեի 278,82 (երկու հարյուր յոթանասունութ ամբողջ ութսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով նկուղի; Կ. Հալաբյան փողոց 1/1 շենքի N 19 հասցեի 82,44 (ութսուներկու ամբողջ քառասունչորս հարյուրերորդական); Կ. Հալաբյան փողոց 1/1 շենքի N 20 հասցեի 63,29 (վաթսուներեք ամբողջ քսանինը հարյուրերորդական); Կ. Հալաբյան փողոց 1 շենքի N 19 հասցեի 82,44 (ութսուներկու ամբողջ քառասունչորս հարյուրերորդական); Կ. Հալաբյան փողոց 1 շենքի N 20 հասցեի 63,29 (վաթսուներեք ամբողջ քսանինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսներով ձեղնահարկերի նպատակային նշանակությունները բնակելիից հասարակականի, իսկ Կ. Հալաբյան փողոց 1/1 շենքի N 1/2 հասցեի 278,82 (երկու հարյուր յոթանասունութ ամբողջ ութսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով նկուղի գործառական նշանակությունը, որպես սպասարկման օբյեկտ, Կ. Հալաբյան փողոց 1/1 շենքի N 19 հասցեի 82,44 (ութսուներկու ամբողջ քառասունչորս հարյուրերորդական); Կ. Հալաբյան փողոց 1/1 շենքի N 20 հասցեի 63,29 (վաթսուներեք ամբողջ քսանինը հարյուրերորդական); Կ. Հալաբյան փողոց 1 շենքի N 19 հասցեի 82,44 (ութսուներկու ամբողջ քառասունչորս հարյուրերորդական); Կ. Հալաբյան փողոց 1 շենքի N 20 հասցեի 63,29 (վաթսուներեք ամբողջ քսանինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսներով ձեղնահարկերի գործառական նշանակությունները,որպես արվեստանոցներ փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի N88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով «Հայաստան» համահայկական հիմնադրամ ՀՄԴ-ի գործադիր տնօրեն Հայկակ Արշամյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 16-ին N 9231 թվագրմամբ).՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Փոփոխել «Հայաստան» համահայկական հիմնադրամ ՀՄԴ-ին պատկանող Գյումրի քաղաքի Կ. Հալաբյան փողոց 1/1 շենքի N 1/2 հասցեի 278,82 (երկու հարյուր յոթանասունութ ամբողջ ութսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով նկուղի; Կ. Հալաբյան փողոց 1/1 շենքի N 19 հասցեի 82,44 (ութսուներկու ամբողջ քառասունչորս հարյուրերորդական); Կ. Հալաբյան փողոց 1/1 շենքի N 20 հասցեի 63,29 (վաթսուներեք ամբողջ քսանինը հարյուրերորդական); Կ. Հալաբյան փողոց 1 շենքի N 19 հասցեի 82,44 (ութսուներկու ամբողջ քառասունչորս հարյուրերորդական); Կ. Հալաբյան փողոց 1 շենքի N 20 հասցեի 63,29 (վաթսուներեք ամբողջ քսանինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսներով ձեղնահարկերի նպատակային նշանակությունները բնակելիից հասարակականի, իսկ Կ. Հալաբյան փողոց 1/1 շենքի N 1/2 հասցեի 278,82 (երկու հարյուր յոթանասունութ ամբողջ ութսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով նկուղի գործառական նշանակությունը, որպես սպասարկման օբյեկտ; Կ. Հալաբյան փողոց 1/1 շենքի N 19 հասցեի 82,44 (ութսուներկու ամբողջ քառասունչորս հարյուրերորդական); Կ. Հալաբյան փողոց 1/1 շենքի N 20 հասցեի 63,29 (վաթսուներեք ամբողջ քսանինը հարյուրերորդական); Կ. Հալաբյան փողոց 1 շենքի N 19 հասցեի 82,44 (ութսուներկու ամբողջ քառասունչորս հարյուրերորդական); Կ. Հալաբյան փողոց 1 շենքի N 20 հասցեի 63,29 (վաթսուներեք ամբողջ քսանինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսներով ձեղնահարկերի գործառական նշանակությունները,որպես արվեստանոցներ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին «Հայաստան» համահայկական հիմնադրամ ՀՄԴ-ի գործադիր տնօրեն Հայկակ Արշամյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

3.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

25.05.2023

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» մայիսի 2023 թվականի N 1332-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՆԵՍՕՂԼՅԱՆ ՓՈՂՈՑ 53 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԻ ՄԱՍԻ՝ 74,9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱՅԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Հանեսօղլյան փողոց 53 հասցեի բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Հակոբ Լևիկի Սարգսյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 10032023-08-0061 վկայական):

Քաղաքացի Հակոբ Լևիկի Սարգսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Հանեսօղլյան փողոց 53 հասցեի բնակելի տան մի մասի՝ 74,9 (յոթանասունչորս ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով ստոմատոլոգիայի գործառական նշանակությունը որպես առևտրի և սպասարկման օբյեկտ փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով քաղաքացի Հակոբ Լևիկի Սարգսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի ապրիլի 20-ին N 7222 թվագրմամբ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Փոփոխել Գյումրի քաղաքի Հանեսօղլյան փողոց 53 հասցեի բնակելի տան մի մասի՝ 74,9 (յոթանասունչորս ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով ստոմատոլոգիայի գործառական նշանակությունը՝ որպես առևտրի և սպասարկման օբյեկտ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Հակոբ Լևիկի Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

25.05.2023

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» Դեկտեմբեր 2023 թվականի № 1331Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՇՏՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 321.82 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0457-0001) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Կոշտոյան փողոցի հարևանությամբ գտնվող 321.82 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0457-0001) տրամադրել հասցե՝

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Խ. ԿՈՇՏՈՅԱՆ ՓՈՂՈՑ, 16/3:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» Դեկտեմբեր 2023 թվականի № 1330Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 292.61 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0346-0002) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Շիրակացու փողոցի հարևանությամբ գտնվող 292.61 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0346-0002) տրամադրել հասցե՝

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ, 11/36:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» հունվարի 2023 թվականի № 1329-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 273.08 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0346-0002) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Շիրակացու փողոցի հարևանությամբ գտնվող 273.08 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0346-0002) տրամադրել հասցե՝

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ, 11/37:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» Դեկտեմբեր 2023 թվականի № 1328-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 53/2 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՄԱՍԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1367-0045) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման և հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 55.4 քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝ **ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 53/2:**
2. 3.22 քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝ **ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 53/3:**

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» մայիսի 2023 թվականի N 1327-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N 762-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 27-ի «Քաղաքացի Լևոն Կարլենի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մովսես Խորենացու փողոց N29/3 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 57.06 քառակուսի մետր արտաքին (46.58 քառակուսի մետր ներքին) մակերեսով առևտրի և սպասարկման օբյեկտով, 176.43 քառակուսի մետր արտաքին (145.61 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը օրինական ճանաչելու մասին» N762-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել որոշման մեջ տեղ գտած բացթողման պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 27-ի « Քաղաքացի Լևոն Կարլենի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մովսես Խորենացու փողոց N29/3 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 57.06 քառակուսի մետր արտաքին (46.58 քառակուսի մետր ներքին) մակերեսով առևտրի և սպասարկման օբյեկտով, 176.43 քառակուսի մետր արտաքին (145.61 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը օրինական ճանաչելու մասին» N762-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.
   1) Նախաբանի վերջում լրացնել <<հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023BATNZK ծածկագիրը >> բառերը և թվերը:

24.05.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» Մայիսի 2023 թվականի N 1326-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N 761-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 27-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մովսես Խորենացու փողոցի N29/3 հասցեով հողամասին կից գտնվող 101.77 քառակուսի մետր մակերեսով հողամասը, նրա վրա ինքնակամ կառուցված 101.76 քառակուսի մետր արտաքին (84.73 քառակուսի մետր ներքին) մակերեսով առևտրի և սպասարկման օբյեկտով, 273.13 քառակուսի մետր արտաքին (220.76 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N761-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել որոշման մեջ տեղ գտած բացթողման պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 27-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մովսես Խորենացու փողոցի N29/3 հասցեով հողամասին կից գտնվող 101.77 քառակուսի մետր մակերեսով հողամասը, նրա վրա ինքնակամ կառուցված 101.76 քառակուսի մետր արտաքին (84.73 քառակուսի մետր ներքին) մակերեսով առևտրի և սպասարկման օբյեկտով, 273.13 քառակուսի մետր արտաքին (220.76 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N761-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.
   1) Նախաբանի վերջում լրացնել <<հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 20236GHZ2X ծածկագիրը >> բառերը և թվերը:

24.05.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» մայիսի 2023 թվականի N 325-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 2764-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի «<<Լաբրադոր>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղարիբջանյան խճուղի N8/2 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 176.52 քառակուսի մետր արտաքին (153.94 քառակուսի մետր ներքին) մակերեսով պահեստը օրինական ճանաչելու մասին» N2764-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել (հիմք՝ գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 25/04/2023 ՆԿ-25042023-08-0120 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի «<<Լաբրադոր>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղարիբջանյան խճուղի N8/2 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 176.52 քառակուսի մետր արտաքին (153.94 քառակուսի մետր ներքին) մակերեսով պահեստը օրինական ճանաչելու մասին» N2764-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝
   1) Նախաբանի վերջում լրացնել << ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023BMQNG4 ծածկագիրը >> բառերը և թվերը:

24.05.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» մայիսի 2023 թվականի N 1324Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Լ.ՄԱԴՈՅԱՆ ՓՈՂՈՑ N33/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 62.34 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ (ԱՐՏԱՔԻՆ) 55.58 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ (ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻՆ, 91.2 ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՖԵՐԴԻՆԱՆՏ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Լ.Մադոյան փողոց N33/4 հասցեում գտնվող 91.2 (իննսունմեկ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը և բնակելի շինությունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N03042023-08-0093վկայական):

Նկատի ունենալով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 11-ի N 100-Ա որոշումը քաղաքացի Ֆերդինանտ Արշալույսի Մարտիրոսյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքարանում 13.06.2022թ. 10375 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Լ.Մադոյան փողոց N33/4 հասցեում գտնվող 62.34 (վաթսուներկու ամբողջ) քառակուսի մետր արտաքին 55.58 (հիսունհինգ ամբողջ հիսունութ) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելին, 509630(հինգ հարյուր ինը հազար վեց հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ,) արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Ֆերդինանտ Արշալույսի Մարտիրոսյանին:
2. Գյումրի քաղաքի Լ.Մադոյան փողոց N33/4 հասցեում գտնվող 91.2 (իննսունմեկ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, կադաստրային գնի չափով, որը օտարման պահին կազմում է 10514 (տաս հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 958877 (ինը հարյուր հիսունութ հազար ութ հարյուր յոթանասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Ֆերդինանտ Արշալույսի Մարտիրոսյանին:

3. Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Ֆերդինանտ Արշալույսի Մարտիրոսյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Ֆերդինանտ Արշալույսի Մարտիրոսյանի միջոցների հաշվին:

24.05.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մայիսի 2023 թվականի N 1323Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՔՍՅԱ ԱԲՐԱՀԱՄԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 3 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 14.37 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 2 ՊԱՏՈՒՀԱՆԸ ԵՎ 2(ԵՐԿՈՒ) ԴՈՒՌԸ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ԲԱՑՎԱԾՔԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արաքսյա Աբրահամի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N3 հասցեի տան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 14.37 (տասնչորս ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական)քառ.մետր ներքին մակերեսով շինություն՝ ինքնակամ բացված է 2(երկու) պատուհան և ինքնակամ 2(երկու) դուռը ձևափոխված է բացվածքի:

Քաղաքացի Արաքսյա Աբրահամի Գասպարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի 18-րդ կետի դ ենթակետի, ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացի Արաքսյա Աբրահամի Գասպարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 07.03.2023թթ. N 3696 թվագրությամբ), որը կադաստրի կոմիտեում հաշվառված է՝ 2023ZB86WY ծածկագրով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Արաքսյա Աբրահամի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N3 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 14.37 (տասնչորս ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական)քառ.մետր ներքին մակերեսով շինությունը՝ ինքնակամ բացված 2(երկու) պատուհանը և ինքնակամ բացվածքի ձևափոխված 2(երկու) դուռը ճանաչել օրինական:Տեղական բյուջե ենթակա է գանձման 5688 (հինգ հազար վեց հարյուր ութսունութ) << դրամ:

2. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արաքսյա Աբրահամի Գասպարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.05.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մայիսի 2023 թվականի N 1322Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի N 900-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 10-ի <<Քաղաքացի Իշխան Նապոլեոնի Վանյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ս.Մատնիշյան փողոց N 243/Բ հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 71,76 քառակուսի մետր ներքին մնակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 1 դուռը և 1 պատուհանը օրինական ճանաչելու մասին>> N 900-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 10-ի <<Քաղաքացի Իշխան Նապոլեոնի Վանյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ս.Մատնիշյան փողոց N 243/Բ հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 71,76 քառակուսի մետր ներքին մնակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 1 դուռը և 1 պատուհանը օրինական ճանաչելու մասին>> N 900-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) նախաբանում <<թվագրությամբ>> բառից հետո լրացնել <<և հիմք՝ ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023WK6SK9 ծածկագիրը>> բառերը և թիվը:

24.05.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հոկտեմբեր 2023 թվականի N 1321-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՆՈՒՇՅԱՆ ՓՈՂՈՑ N 5/17 ՀԱՍՑԵԻ 121,33 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (103,2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, 199,31 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Մանուշյան փողոց N 5/17 հասցեի 199,31 (մեկ հարյուր իննսունինն ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 28032023-08-0006 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 12-ի N 70-Ա և 2023 թվականի մայիսի 11-ի N 100-Ա որոշումները, քաղաքացի Անդրանիկ Հարությունյանի լիազորված անձ Վահագն Հարությունյանի դիմումը ՝ (մուտքագրված համայնքապետարանում 2021 թվականի հունվարի 21-ին N 981 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Մանուշյան փողոց N 5/17 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 121,33 (մեկ հարյուր քսանմեկ ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (103,2 (մեկ հարյուր երեք ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող վաճառքի գնով,որը կազմում է 618783 (վեց հարյուր տասնութ հազար յոթ հարյուր ութսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Անդրանիկ Հարությունյանին:

2. Գյումրի քաղաքի Մանուշյան փողոց N 5/17 հասցեի 199,31 (մեկ հարյուր իննսունինն ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող կադաստրային արժեքով, որը կազմում է 1914 (մեկ հազար ինը հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 381480 (երեք հարյուր ութսունմեկ հազար չորս հարյուր ութսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Անդրանիկ Հարությունյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Անդրանիկ Հարությունյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Առուվաճառքի հետ կապված պայմանագրերի նոտարական վավերացման և պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Անդրանիկ Հարությունյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Անդրանիկ Հարությունյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

24.05.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» Հոկտեմբեր 2023 թվականի N 1320-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի N 687-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 20-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մովսես Խորենացու փողոց 16 շենք N1 հասցեի բնակարանին կից գտնվող 135.1 քառակուսի մետր մակերեսով հողամասը, նրա վրա ինքնակամ կառուցված 88.6 քառակուսի մետր արտաքին (80.28 քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը և 1.0 քառակուսի մետր մակերեսով պարիսպը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N687-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել որոշման մեջ տեղ գտած բացթողման պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 20-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մովսես Խորենացու փողոց 16 շենք N1 հասցեի բնակարանին կից գտնվող 135.1 քառակուսի մետր մակերեսով հողամասը, նրա վրա ինքնակամ կառուցված 88.6 քառակուսի մետր արտաքին (80.28 քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը և 1.0 քառակուսի մետր մակերեսով պարիսպը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N687-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.
   1) Նախաբանի վերջում լրացնել <<հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2022SY4EQR ծածկագիրը >> բառերը և թվերը:

24.10.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մայիսի 2023 թվականի N 1319-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՔՐԻՍՏԻՆԱ ՍԱՄՎԵԼԻ ՀՈՒՆԱՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ Պ.ՍԵՎԱԿ ՓՈՂՈՑ 20 ՇԵՆՔ 58 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ՍՅՈՒԶԱՆՆԱ ԱՐԹՈՒՐԻ ՀՈՒՆԱՆՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի մայիսի 22-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Քրիստինա Սամվելի Հունանյանը (անձնագիր՝ BA3452555, տրված՝ 19.03.2020 թվականին 227-ի կողմից)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 26.09.2006 թվականին ծնված Սյուզաննա Արթուրի Հունանյանի (անձնագիր՝ AS0583854, տրված՝ 03.04.2019 թվականին 074-ի կողմից) Գյումրի քաղաքի Անի թաղամաս Պ.Սևակ փողոց 20 շենք 58 բնակարանի մասնաբաժինը:

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատեր է հանդիսանում նաև անչափահաս՝ Սյուզաննա Արթուրի Հունանյանը (հիմք՝ 28.03.2014 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 28032014-08-0002):

Նիստին ներկա գտնվող երեխայի մայրը՝ Քրիստինա Սամվելի Հունանյանը ներկայացրեց պարտավորություն, որով ինքը և երեխայի հայրը՝ Արթուր Աշոտի Հունանյանը պարտավորվում են վերոնշյալ բնակարանի վաճառքից հետո ձեռք բերել իր անվամբ այլ բնակարանում սեփականության իրավունքով բնակարանի բաժին՝ ոչ պակաս մակերեսով, քան այն, որը նա նախկինում տիրապետել է (հիմք՝ պարտավորություն 61ԱԱ9310381, տրված՝ ՀՀ «Շիրակի մարզ» նոտարական տարածքի նոտար՝ Հ.Ֆենդյանի կողմից, գրանցված է գրանցամատյանում թիվ 6102):

Երեխայի մայրը՝ Քրիստինա Սամվելի Հունանյանը հայտնեց նաև, որ 2014 թվականից նա իր ընտանիքի հետ բնակվում է Ռուսաստանի Դաշնության Ռոստովի մարզի Բելոկալիտվինսկի շրջանի Շոլոխովսկի գյուղում և բնակարանի վաճառքից հետո նրանք ձեռք են բերելու նոր բնակարան:

Անչափահաս՝ Սյուզաննա Արթուրի Հունանյանը 2014 թվականից մինչ օրս հաճախում է Ռուսաստանի Դաշնության Ռոստովի մարզի Բելոկալիտվինսկի շրջանի Շոլոխովսկի գյուղի №8 միջնակարգ հանրակրթական դպրոց և հիմա սովորում է 9Բ դասարանում (տեղեկանքը կցվում է):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Քրիստինա Սամվելի Հունանյանի 2023 թվականի մայիսի 22-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 9577 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և

հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 23-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայնություն տալ Քրիստինա Սամվելի Հունանյանին (անձնագիր՝ BA3452555)՝ վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 26.09.2006 թվականին ծնված Սյուզաննա Արթուրի Հունանյանի (անձնագիր՝ AS0583854) Գյումրի քաղաքի Անի թաղամաս Պ.Սևակ փողոց 20 շենք 58 բնակարանի մասնաբաժինը, նոր բնակարան ձեռք բերելու կապակցությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Քրիստինա Սամվելի Հունանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.05.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» մայիսի 2023 թվականի N 1318-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՓԻՆԵ ՎԱՆՅԱՅԻ ԹԱԹՈՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Լ.ՄԱԴՈՅԱՆ ՓՈՂՈՑ 30 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ԱՆԻ ԳԱԳԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի մայիսի 18-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Արփինե Վանյայի Թաթոյանը (անձնագիր՝ AU0205758, տրված՝ 22.03.2021 թվականին 016-ի կողմից)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 13.07.2010 թվականին ծնված Անի Գագիկի Սահակյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №075553) Գյումրի քաղաքի Լ.Մադոյան փողոց 30 բնակելի տան մասնաբաժինը:

Վերոնշյալ հասցեի բնակելի տան համասեփականատեր է հանդիսանում նաև անչափահաս՝ Անի Գագիկի Սահակյանը (հիմք՝ 28.11.2022 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 28112022-08-0023):

Երեխայի հայրը՝ Գագիկ Աշոտի Սահակյանը մահացել է 2019 թվականի հունիսի 15-ին (հիմք՝ պետական վկայական մահվան մասին ԲԱ132456):

Նիստին ներկա գտնվող երեխայի մայրը՝ Արփինե Վանյայի Թաթոյանը հայտնեց, որ իր ընտանիքին է պատկանում նաև Գյումրի քաղաքի Մանուշյան փողոց 1ա շենք 3 բնակարանը, որտեղ և ներկա պահին բնակվում են (հիմք՝ 29.10.2013 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 29102013-08-0032, հիմք՝ տեղեկանք տրված՝ 17.05.2023 թվականին «Գյումրի Կենտրոն» համատիրության կողմից):

Երեխայի մայրը՝ Արփինե Վանյայի Թաթոյանը անհատ ձեռնարկատեր է և բնակելի տան վաճառքը նպաստելու է բիզնեսի զարգացմանը (հիմք՝ վկայական 01 Ա 095746 անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման):

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Անի Գագիկի Սահակյանը հայտնեց, որ համաձայն է վաճառելու բնակելի տան իր մասնաբաժինը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Արփինե Վանյայի Թաթոյանի 2023 թվականի մայիսի 18-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 9371 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 23-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայնություն տալ Արփինե Վանյայի Թաթոյանին (անձնագիր՝ AU0205758) վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 13.07.2010 թվականին ծնված Անի Գագիկի Սահակյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №075553) Գյումրի քաղաքի Լ.Մադոյան փողոց 30 բնակելի տան մասնաբաժինը, բիզնեսը զարգացնելու կապակցությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արփինե Վանյայի Թաթոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.05.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» մայիսի 2023 թվականի N 1317-Վ

ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՄՍՈՆ ՀՈՎՀԱՆԵՍԻ ՈՒՆՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՄԻՏԱՍԻ ՓՈՂՈՑ N19 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 143.24 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 (ՄԵԿ) ԴՈՒՌԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ 1 (ՄԵԿ) ԴՈՒՌԸ ԲԱՑՎԱԾՔԻ ՁԵՎԱՓՈԽԵԼՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սամսոն Հովհանեսի Ունոյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կոմիտասի փողոց N19 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված են 143.24 (հարյուր քառասուներեք ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, որից 125.35(հարյուր քսանհինգ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, իսկ 20.39(քսան ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (17.89 (տասնյոթ ամբողջ ութսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքի) մակերեսով շինությունները կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից հետո, ինքնակամ բացված է 1 (մեկ) դուռը եվ ինքնակամ 1 (մեկ) դուռը ձևափոխվել է բացվածքի:

Քաղաքացի Սամսոն Հովհանեսի Ունոյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցների պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023GWJG8W ծածկագիրը և քաղաքացի Սամսոն Հովհանեսի Ունոյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N5871 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Սամսոն Հովհանեսի Ունոյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կոմիտասի փողոց N19 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 143.24 (հարյուր քառասուներեք ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 1 (մեկ) դուռը եվ ինքնակամ 1 (մեկ) դուռը բացվածքի ձևափոխելը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 51855 (հիսունմեկ հազար ութ հարյուր հիսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

24.05.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» Դեկտեմբեր 2023 թվականի N 1316-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՍԱՄՍՈՆԻ ՄԱԴՈՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 17 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 43.80 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ, ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 90.26 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՝ ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ ՄԵԿ ԴՈՒՌԸ ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Աշոտ Սամսոնի Մադոյանը ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ա.Պետրոսյան փողոցի N 17 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 90.26 (իննսուն ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները և ինքնակամ փակված է 1(մեկ) դուռ և 1 (մեկ) պատուհան օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 43.80 (քառասուներեք ամբողջ ութսուն հարյուերորդական) քառ.մ մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Աշոտ Սամսոնի Մադոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին >> օրենքով 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով (և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22. 1 կետի 18-րդ կետի դ ենթակետի, հիմք ընդունելով քաղաքացի Աշոտ Սամսոնի Մադոյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 10.04.2023թ. N 6205 թվագրմամբ), որը կադաստրի կոմիտեում հաշվառված է՝ 2023GQPT9K, 2023EDUMZQ ծածկագրերով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Աշոտ Սամսոնի Մադոյանի (ծնված՝ 20.01.1961թ.) ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ա.Պետրոսյան փողոցի N 17 հասցեի տան կառուցապատման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 43.80 (քառասուներեք ամբողջ ութսուն հարյուերորդական) քառ.մ մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության նկատմամբ:

2. Քաղաքացի Աշոտ Սամսոնի Մադոյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ա.Պետրոսյան փողոցի N 17 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 90.26 (իննսուն ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները և ինքնակամ փակված 1(մեկ) դուռը և 1 (մեկ) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 4632 (չորս հազար վեց հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ քաղաքացի Աշոտ Սամսոնի Մադոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.05.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մայիսի 2023 թվականի N 1315-Ա

ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐ՝ ԱՐՓԻՆԵ ՀՐԱՆՏԻ ՄԱՅԻԼՅԱՆԻ ԵՎ ԲԵՆԻԿ ՌԱԴԻԿԻ ՄԱՅԻԼՅԱՆԻ ՀԵՏԱԳԱ ԽՆԱՄՔԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի մայիսի 13-ին Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի կողմից ահազանգ է ստացվել, որ Գյումրի քաղաքի 139/251 ժամանակավոր կացարանում բնակություն է հաստատել Սևան քաղաքի բնակիչ՝ Կարինե Բենիկի Մայիլյանը իր երեք անչափահաս երեխաների՝ 28.01.2013 թվականին ծնված Արփինե Հրանտի Մայիլյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №241633), 11.02.2019 թվականին ծնված Բենիկ Ռադիկի Մայիլյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ084774) և 13.10.2021 թվականին ծնված Անգելինա Մայիլյանի հետ:

Շիրակի մարզպետարանի «Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության» բաժնի գլխավոր մասնագետ՝ Մ.Մանուկյանի, Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի քարտուղար՝ Ն.Սարգսյանի, Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնի սոցիալական աշխատող՝ Ա.Պետրոսյանի և Ոստիկանության Կումայրիի բաժնի անչափահասների գործերով և ընտանեկան բռնության կանխարգելման բաժանմունքի տեսուչ, ոստիկանության կապիտան՝ Տ.Վահրամյանի կողմից համատեղ կատարվել է ուսումնասիրություն և պարզվել է, որ ժամանակավոր կացարանը պատկանում է Գյումրի քաղաքի բնակիչ՝ Արթուր Հովհաննիսյանին:

Ժամանակավոր կացարանը գտնվում էր անմխիթար, հակասանիտարական վիճակում, չգազաֆիկացված, առանց ջրամատակարարման, սոցիալ-կենցաղային պայմանները խիստ անբավարար էին:

Ուսումնասիրությունից պարզվել է նաև, որ երեխաները անտեսված էին, չխնամված, անտարբերության մատնված, անչափահաս՝ Արփինե Հրանտի Մայիլյանը չի հաճախում դպրոց, երեխաների համար ստեղծված չեն գոյատևման և առողջ զարգացման պայմաններ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26 մայիսի 2016 թվականի N 551-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված

կանոնադրության դրույթներով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 23-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Ի նկատի ունենալով երեխաների լավագույն շահի առաջնային գնահատման կարևորությունը՝

1. 28.01.2013 թվականին ծնված Արփինե Հրանտի Մայիլյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №241633) և 11.02.2019 թվականին ծնված Բենիկ Ռադիկի Մայիլյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ084774) խնամքը և դաստիարակությունը ժամանակավորապես կազմակերպել «Տիրամայր Հայաստանի» կենտրոնում:
2. Ի նկատի ունենալով անչափահաս՝ 13.10.2021 թվականին ծնված Անգելինա Մայիլյանի մանկահասակ լինելը և կապվածությունը մոր՝ Կարինե Բենիկի Մայիլյանի հետ նրա խնամքը կազմակերպել մոր մոտ:

24.05.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» մայիսի 2023 թվականի N 1314-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԱՏ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱԲԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության ազատ ըմբշամարտի Համբարձում Աբելյանի հիշատակին նվիրված 2023 թվականի մայիսի 26–28-ը Գառնի համայնքում կայանալիք միջազգային հուշամրցաշարին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով ըմբշամարտի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի մայիսի 24-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության ազատ ըմբշամարտի Համբարձում Աբելյանի հիշատակին նվիրված միջազգային հուշամրցաշարին մասնակցելու համար 2023 թվականի մայիսի 26–28-ը Գառնի համայնք գործուղել թվով 10 մարզիկի և 2 մարզիչի(համաձայն հավելվածի):
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թ.
_____ N _____ որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Ազատ ըմբշամարտի Համբարձում Աբելյանի հիշատակին նվիրված միջազգային հուշամրցաշարին **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

1. Միսակյան Կամո – մարզիկ
2. Ղազարյան Գևորգ – մարզիկ
3. Ավետիսյան Տիգրան – մարզիկ
4. Պետրոսյան Գուրգեն – մարզիկ
5. Ծառուկյան Գոռ – մարզիկ
6. Նիկողոսյան Արկադի – մարզիկ
7. Սարգսյան Նարեկ – մարզիկ
8. Մինասյան Արտուշ – մարզիկ
9. Սահակյան Գրիգոր – մարզիկ
10. Նալբանդյան Տիգրան – մարզիկ
11. Պապոյան Մանվել – մարզիչ
12. Մինասյան Արտուշ – մարզիչ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» մայիսի 2023 թվականի N 1313-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱԽՄԱՏԻ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ 1-ԻՆ ԽՄԲԻ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿԻՉ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության շախմատի կանանց և տղամարդկանց 1-ին խմբի 2023 թվականի մայիսի 28-ից հունիսի 4-ը Երևան քաղաքում կայանալիք կիսաեզրափակիչ մրցումներին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով շախմատի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի մայիսի 24-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության շախմատի կանանց և տղամարդկանց 1-ին խմբի կիսաեզրափակիչ մրցումներին մասնակցելու համար 2023 թվականի մայիսի 28-ից հունիսի 4-ը քաղաք Երևան գործուղել թվով 6 մարզիկի և 2 մարզիչի(համաձայն հավելվածի):
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թ. Դեկտեմբերի 26-ի N 1313-Ա որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Շախմատի կանանց և տղամարդկանց 1-ին խմբի կիսաեզրափակիչ մրցումներին **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

1. Թորոսյան Վոլոդյա – մարզիկ
2. Թարզյան Հարություն – մարզիկ
3. Գուլիշյան արթուր Հունանի – մարզիկ
4. Տիրատուրյան Դավիթ – մարզիկ
5. Բեռնեցյան Ռուզաննա – մարզիկ
6. Գևորգյան Նռանե – մարզիկ
7. Բաղդասարյան Վահե – մարզիչ
8. Օհանյան Էմանուել – մարզիչ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» մայիսի 2023 թվականի N 13/2Ա

«ՋԱՆՈՅԱՆ ՔՈՄՓԱՆԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՑՈԼԱԿ ՋԱՆՈՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԶՈՎԱՑՈՒՑԻՉ ԸՄՊԵԼԻՔՆԵՐԻ ԲԱՑՕԹՅԱ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Ջանոյան Քոմփանի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ցոլակ Ջանոյանի (ՀՎՀՀ՝ 05556816, գրանցման ամսաթիվը՝ 25.10.2022 թ.) 2023 մայիսի 15-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի մայիսի 15-ին 9161 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել «Ջանոյան Քոմփանի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ցոլակ Ջանոյանին Գյումրի քաղաքի Ռիժկովի փողոցի հարևանությամբ իրականացնել զովացուցիչ ըմպելիքների բացօթյա վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի հունիսի 15-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ջանոյան Քոմփանի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ցոլակ Ջանոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.05.2023

X _____ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» հունիսի 2023 թվականի N 1398Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԻ ԱԼԲԵՐՏԻ ԴՈՒՐԳԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ 2 ՇԵՆՔ 32 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ԱՍՏՂԻԿ ԷԴԳԱՐԻ ԹԱԼԱԼՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ԳՐԱՎԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի հունիսի 1-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Անի Ալբերտի Դուրգարյանը (նույնականացման քարտ՝ 006382840) խնդրելով տալ համաձայնություն գրավադրելու իր անչափահաս երեխայի՝ 15.10.2010 թվականին ծնված Աստղիկ Էդգարի Թալալյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №095557)՝ Գյումրի քաղաքի Արևելյան փողոց 2 շենք 32 բնակարանի մասնաբաժինը:

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատեր է հանդիսանում նաև անչափահաս՝ Աստղիկ Էդգարի Թալալյանը (հիմք՝ 10.02.2022 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 10022022-08-0011):

Երեխայի հայրը՝ Էդգար Սուրենի Թալալյանը մահացել է 2020 թվականի դեկտեմբերի 23-ին (հիմք՝ պետական վկայական մահվան մասին ԲԱ341018):

Նիստին ներկա գտնվող երեխայի մայրը՝ Անի Ալբերտի Դուրգարյանը հայտնեց, որ ինքը անհատ ձեռնարկատեր է և բնակարանի գրավադրումը նպաստելու է բիզնեսի զարգացմանը (հիմք՝ պետական միասնական գրանցամատյանից քաղվածք առ 2022-06-01):

Անի Ալբերտի Դուրգարյանը աշխատում է ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու №28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում որպես ուսուցչի օգնական (0,5դր.), հոգեբան (0,5դր.) և նրա աշխատավարձը կազմում է 127320 (մեկ հարյուր քսանյոթ հազար երեք հարյուր քսան) դրամ (հիմք՝ տեղեկանք տրված՝ 01.06.2023 թվականին):

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Աստղիկ Էդգարի Թալալյանը տվել է համաձայնություն իր մասնաբաժինը գրավադրելու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Անի Ալբերտի Դուրգարյանի 2023 թվականի հունիսի 1-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 10903 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 2-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայնություն տալ գրավադրելու Անի Ալբերտի Դուրգարյանին (նույնականացման քարտ՝ 006382840) իր անչափահաս երեխայի՝ 15.10.2010 թվականին ծնված Աստղիկ Էդգարի Թալալյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №095557)՝ Գյումրի քաղաքի Արևելյան փողոց 2 շենք 32 բնակարանի մասնաբաժինը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անի Ալբերտի Դուրգարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.06.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» հոկտեմբերի 2023 թվականի N 1397-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԹԻՎ 1616-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2019 թվականի սեպտեմբերի 09-ի «Խնամակալություն սահմանելու և քաղաքացի Ասյա Վաչագանի Պետրոսյանին՝ անչափահասներ Ասյա Ռուստամի Պետրոսյանի և Եվգենիյա Ռուստամի Պետրոսյանի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին» N 1616-Ա որոշման նախաբանը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«2019 թվականի սեպտեմբերի 03-ին Գյումրու համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին (համայնքի ղեկավարին) է դիմել Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի 28/12 տան բնակիչ Ասյա Վաչագանի Պետրոսյանը (ծնված 13.09.1950թ.-ին, ծննդավայրը՝ Վրաստան, անձնագիր՝ AL0229076, տրված 28.04.2023 թվականին, 065-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Ղանդիլյան փողոց, տուն 28/12)՝ խնդրելով իրեն նշանակել խնամակալ իր երկու անչափահաս թոռնուհիների՝ 05.01.2009 թվականին ծնված Ասյա Ռուստամի Պետրոսյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ 261813, տրված 19.01.2009 թվականին, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից, ՀԾՀ 55210090312) և 14.06.2011 թվականին ծնված Եվգենիյա Ռուստամի Պետրոսյանի (ծննդյան վկայական՝ II-ԲԱ No.765598, տրված 02.07.2011 թվականին, Կրասնոյարսկ ք., Ցենտրալնի շրջանի, Կրասնոյարսկի երկրամասի ՔԿԱԳ գործակալության տարածքային բաժնի կողմից) նկատմամբ:

Երեխաների հայրը՝ Ռուստամ Անուշավանի Պետրոսյանը (ծնված 06.05.1976թ.-ին, անձնագիր՝ AS0642885, տրված 10.06.2019 թվականին, 008-ի կողմից, հաշվառված ք. Գյումրի, Ղանդիլյան փողոց, տուն 28/12, ժամանակավոր գտնվում է ՌԴ տարածքում, Ռոստովի մարզ, Մյասնիկյանի շրջան, գ.. Բոլշիյե Սալի, փ.26 Բաքվի կոմիսարների, տուն 11) 13.08.2019 թվականին նոտարական վավերացմամբ համաձայնությամբ հայտնել է իր համաձայնությունը, որպեսզի իր դուստրերի նկատմամբ սահմանվի խնամակալություն և խնամակալ նշանակվի մայրը՝ Ասյա Վաչագանի Պետրոսյանը (հիմք՝ 23.08.2019 թվականին, նոտար Հ.Ֆենդյանի գրանցամատյանում թիվ 10808 համարով համաձայնության թարգմանության վավերացում):

Երեխաների մայրը՝ Լիանա Գրիգորի Պողոսյանը մահացել է 07.07.2018 թվականին (հիմք՝ մահվան ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանք, տրված 21.05.2019 թվականին, Գյումրու ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից):

ՀՀ Ոստիկանության 13.08.2019 թվականի թիվ 896827 տեղեկանքի համաձայն՝ Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի, 28/12 տուն հասցեում հաշվառված են Ասյա Վաչագանի Պետրոսյանը ընտանիքի վեց անձանց հետ միասին: Փաստացի համատեղ բնակվում են ամուսինները՝ թոռնուհիների հետ միասին:

Գյումրի-1 ՍԱՏԲ-ի պետի կողմից 03.09.2019 թվականին կազմված կենսապայմանների ուսումնասիրության վերաբերյալ արձանագրությամբ հաստատվում է, որ նշված մարմնի գլխավոր մասնագետների կողմից կատարվել է տնային այց Ասյա Պետրոսյանի ընտանիք և պարզվել է, որ անչափահաս երեխաները համատեղ բնակվում են տատի՝ Ասյա Պետրոսյանի, և պապի՝ Անուշավան Պետրոսյանի հետ: Վերջիններս ստանձնել են անչափահաս երեխաների խնամքը, քանի որ երեխաների հայրը բացակայում է Հայաստանի Հանրապետությունից, իսկ մայրը մահացել է: /Հիմք՝ 03.09.2019 թվականի արձանագրություն/

ՀՀ ՇՄ «Գյումրու թիվ 7» հիմնական դպրոցի տնօրենի 03.09.2019 թվականին տրված տեղեկանքների համաձայն՝ անչափահաս Ասյա Պետրոսյանը սովորում է նույն դպրոցի 4-րդ դասարանում, իսկ Եվգենիյա Պետրոսյանը՝ նույն դպրոցի 2-րդ դասարանում:

«Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 12.08.2019 թվականին տրված տեղեկանքների համաձայն՝ Ասյա Վաչագանի Պետրոսյանը հաշվառման մեջ չի գտնվում նյարդահոգեբուժական և նարկոլոգիական դիսպանսերներում:/Հիմք՝ տեղեկանքներ/

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Էնրիկո Մատտեի անվան» պոլիկլինիկայի տնօրենի և բուժող բժշկի կողմից Ասյա Պետրոսյանի բժշկական քարտի քաղվածքի համաձայն՝ վերջինիս մոտ ախտորոշվել է զարկերակային հիպերտենզիա 2-րդ աստիճանի:

Նիստին ներկա գտնվող Անուշավան Պետրոսյանը հայտնեց իր համաձայնությունը, որպեսզի կինը Ասյա Պետրոսյանը ստանձնի երեխաների խնամակալությունը:

Անչափահասներ՝ Եվգենիյա և Ասյա Պետրոսյանները նույնպես հայտնեցին իրենց համաձայնությունը:

Ելնելով անչափահասներ Ասյա և Եվգենիյա Ռուստամի Պետրոսյանների շահերից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Ասյա Վաչագանի Պետրոսյանի 03.09.2019 թվականի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված 11981 թվագրությամբ) Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2019 թվականի սեպտեմբերի 06-ի նիստի արձանագրությամբ տրված դրական եզրակացությունը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ասյա Վաչագանի Պետրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.09.2023

x

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» մայիսի 2023 թվականի N 139Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱԿ ԱՇՈՏԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Խ.ԿՈՉՏՈՅԱՆ ՓՈՂՈՑ 5/1 ՇԵՆՔ 44 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ՝ ՀԱՅԿՈՒՀԻ ԱՐՏԱԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ, ԱՍՅԱ ԱՐՏԱԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԵՎ ՄԱՐԻԱՄ ԱՐՏԱԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆՆԵՐԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի մայիսի 26-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Արտակ Աշոտի Մկրտչյանը (անձնագիր՝ AV0644356, տրված՝ 20.02.2023 թվականին 065-ի կողմից)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխաների՝ 01.01.2006 թվականին ծնված Հայկուհի Արտակի Մկրտչյանի (անձնագիր՝ AU0681372, տրված՝ 12.04.2022 թվականին 016-ի կողմից), 12.05.2010 թվականին ծնված Ասյա Արտակի Մկրտչյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №060797) և 12.05.2010 թվականին ծնված Մարիամ Արտակի Մկրտչյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №060798) Գյումրի քաղաքի Խ.Կոչտոյան փողոց 5/1 շենք 44 բնակարանի մասնաբաժինները:

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատերեր են հանդիսանում նաև անչափահասներ՝ Հայկուհի Արտակի Մկրտչյանը, Ասյա Արտակի Մկրտչյանը և Մարիամ Արտակի Մկրտչյանը (հիմք՝ 26.05.2023 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 26052023-08-0030):

Երեխաների մայրը՝ Ֆենյա Գևորգի Պապիկյանը մահացել է 2020 թվականի հուլիսի 1-ին (հիմք՝ պետական վկայական մահվան մասին ԲԱ266290):

Նիստին ներկա գտնվող երեխաների հայրը՝ Արտակ Աշոտի Մկրտչյանը հայտնեց, որ իր անչափահաս երեխաները՝ Հայկուհի Արտակի Մկրտչյանը, Ասյա Արտակի Մկրտչյանը և Մարիամ Արտակի Մկրտչյանը ժառանգ են հանդիսանում ք.Գյումրի Անի թաղ. 7/յոթ/ փողոց, շենք 14/տասնչորս/ Ա, թիվ 10/տաս/ հասցեում գտնվող բնակարանի 1/24-րդ մասերի, որի պատկանելիությունը ժառանգատուին հաստատված է համաձայն Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գյումրու տարածքային ստորաբաժանման կողմից տրված 01.03.2005 թ. թիվ 1125395 սեփականության իրավունքի գրանցման վկայականով (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր, տրված՝ 15.03.2021 թվականին ՀՀ «Շիրակի մարզ» նոտարական տարածքի նոտար՝ Ռ.Մուկուչյանի կողմից գրանցված է թիվ 1110,1111,1112 ժառանգական գործ թիվ 361):

Երեխաների հայրը՝ Արտակ Աշոտի Մկրտչյանը հայտնեց նաև, որ բնակարանի վաճառքից հետո ձեռք են բերելու նոր բնակարան:

Նիստին ներկա գտնվող անչափահասներ՝ Հայկուհի Արտակի Մկրտչյանը, Ասյա Արտակի Մկրտչյանը և Մարիամ Արտակի Մկրտչյանը հայտնեցին, որ համաձայն են վաճառելու բնակարանի իրենց մասնաբաժինները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Արտակ Աշոտի Մկրտչյանի 2023 թվականի մայիսի 26-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 10284 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 6-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայնություն տալ Արտակ Աշոտի Մկրտչյանին (անձնագիր՝ AV0644356) վաճառելու իր անչափահաս երեխաների՝ 01.01.2006 թվականին ծնված Հայկուհի Արտակի Մկրտչյանի (անձնագիր՝ AU0681372), 12.05.2010 թվականին ծնված Ասյա Արտակի Մկրտչյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №060797) և 12.05.2010 թվականին ծնված Մարիամ Արտակի Մկրտչյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №060798) Գյումրի քաղաքի Խ.Կոշտոյան փողոց 5/1 շենք 44 բնակարանի մասնաբաժինները, նոր բնակարան ձեռք բերելու կապակցությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտակ Աշոտի Մկրտչյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.06.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» հոկտեմբեր 2023 թվականի №1395-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 268 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0749-0069), ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 268/1 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0749-0117) ԵՎ ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 268/2 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0749-0115) ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Տիգրան Խաչատրյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №10775 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Ն.Ղորղանյան փողոց 268 (կադաստրային ծածկագիր 08-001-0749-0069), Ն. Ղորղանյան փողոց 268/1 (կադաստրային ծածկագիր 08-001-0749-0117) և Ն. Ղորղանյան փողոց 268/2 (կադաստրային ծածկագիր 08-001-0749-0115) հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ն. ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 268 ՀՈՂԱՄԱՍ

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2023 **թվականի** N 1394-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ղ.ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ 5-ՐԴ ՇԱՐՔ N 16/1 ՀԱՍՑԵԻ 31.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղ.Ղուկասյան փողոց 5-րդ շարք N 16 հասցեի 235.12 (երկու հարյուր երեսունհինգ ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր հողամասով բնակելի տունն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Լուսինե Դանիելի Քոչարյանին և Ջուլիետա Երանոսի Երանոսյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 26052020-08-0011 վկայական):

Քաղաքացի Լուսինե Դանիելի Քոչարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 21032023-08-0045 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղ.Ղուկասյան. փողոց 5-րդ շարք N 16/1 հասցեի 31.5 (երեսունմեկ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 11-ի N 92-Ա որոշումը և քաղաքացի Լուսինե Դանիելի Քոչարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի փետրվարի 02-ին N 1987 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացիներ Լուսինե Դանիելի Քոչարյանին և Ջուլիետա Երանոսի Երանոսյանին, որպես ընդհանուր համատեղ սեփականություն, ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Գյումրի քաղաքի Ղ.Ղուկասյան փողոց 5-րդ շարք N 16 հասցեի 235.12 (երկու հարյուր երեսունհինգ ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր հողամասով բնակելի տանը հարակից, Ղ.Ղուկասյան փողոց 5-րդ շարք N 16/1 հասցեի 31.5 (երեսունմեկ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով Գյումրի համայնքին պատկանող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ բնակելի տան ընդլայնման նպատակով, որպես բակ:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տաս հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 331.191(երեք հարյուր երեսունմեկ հազար հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Որոշումը կայանալու պահից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում, որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
5. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացիներ Լուսինե Դանիելի Քոչարյանի և Ջուլիետա Երանոսի Երանոսյանի միջոցների հաշվին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Լուսինե Դանիելի Քոչարյանին և Ջուլիետա Երանոսի Երանոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

05.06.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունվար 2023 թվականի № 1393.Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 10.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0360-0003) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի հարևանությամբ գտնվող 10.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0360-0003) տրամադրել հասցե՝

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Վ. ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 1/13 ՀՈՂԱՄԱՍ

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունվարի 2023 թվականի №1392-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՇԱՐՔ, 20/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ 1.39 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 2.78 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 18-ի №1240–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Ղուկասյան փողոց, 2-րդ շարք, 20/1 հասցեի բնակելի տանը կից գտնվող 1.39 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1314-0006) և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 2.78 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությանը տրամադրել հասցե՝

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ղ. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՇԱՐՔ, 23/2 ՀՈՂԱՄԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«02» հունիսի 2023 թվականի N 1391Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 135/3 ՀԱՍՑԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց N 135/3 հասցեի վարչական շենքը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Ավետիք Սամվելի Մելոյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 15032018-08-0029 վկայական):

Քաղաքացի Ավետիք Սամվելի Մելոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց N 135/3 հասցեի 182,33 (մեկ հարյուր ութսուներկու ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով արտադրական նպատակային նշանակության վարչական շենքի գործառական նշանակությունը՝ որպես արտադրամաս փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով քաղաքացի Ավետիք Սամվելի Մելոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի ապրիլի 07-ին N 6155 թվագրմամբ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Փոփոխել Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց N 135/3 հասցեի 182,33 (մեկ հարյուր ութսուներկու ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով արտադրական նպատակային նշանակության վարչական շենքի գործառական նշանակությունը՝ որպես արտադրամաս:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Ավետիք Սամվելի Մելոյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«02» հունիսի 2023 թվականի N 1390-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՕԳՆԱԿԱՆ ԿԱՐԵՆ ԳՈՒՐԳԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Կարեն Գուրգենի Վարդանյանի 2023 թվականի հունիսի 1-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի օգնական Կարեն Գուրգենի Վարդանյանին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ 2023 թվականի հունիսի 5-ից:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Գուրգենի Վարդանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

02.06.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«02» հունիսի 2023 թվականի N 1389-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՆՆԱ ՀՐԱՉԻԿԻ ՄԵՔԻՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Աննա Հրաչիկի Մեքինյանի 2023 թվականի հունիսի 1-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի պետ Աննա Հրաչիկի Մեքինյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2023 թվականի հունիսի 7-ից:

2. Ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 20 աշխատանքային օր՝ 2023 թվականի հունիսի 7-ից մինչև 2023 թվականի հուլիսի 4-ը ներառյալ:

3. Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Աննա Հրաչիկի Մեքինյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի գլխավոր մասնագետ Հասմիկ Մելսիկի Սամսոնյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աննա Հրաչիկի Մեքինյանին և Հասմիկ Մելսիկի Սամսոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

02.06.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 02 >> հունիսի 2023 թվականի N 1388-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՇԽԵՆ ՎԱՀԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, 163-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Աշխեն Վահանի Գևորգյանի 2023 թվականի մայիսի 30-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Սուրբ Մարիամ-մսուր մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աշխեն Վահանի Գևորգյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2023 թվականի հունիսի 5-ից:

2. Ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր՝ 2023 թվականի հունիսի 5-ից 16-ը ներառյալ:

3. Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Աշխեն Վահանի Գևորգյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության մեթոդիստ Զինա Էդվարդի Ղազարյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աշխեն Վահանի Գևորգյանին և Զինա Էդվարդի Ղազարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«01» հունվարի 2023 թվականի № 1387Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՀԱՄԼԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ԱՆՑՈՒՄ, 33 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0679-0004) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Սամվել Կարապետյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №9882 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Հ. Սարգսյան փողոց, 2-րդ անցում, 33 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (կադաստրային ծածկագիր 08-001-0679-0004) վերահասցեավորել՝

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Հ. ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 5/33 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«01» հունվարի 2023 թվականի № 1386 Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՇՉԵԴՐԻՆԻ ՓՈՂՈՑ, 5Բ ՇԵՆՔ, 21 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №29072020-08-0019) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Թամարա Ոսկանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №10424 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Նուրիջանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված շինության բաժանման սխեմաները և հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 55,40 քառակուսի մետր մակերեսով շինությունը հասցեավորել՝
   ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Մ. ՇՉԵԴՐԻՆԻ ՓՈՂՈՑ, 5Բ ՇԵՆՔ, 21 ԲՆԱԿԱՐԱՆ
2. 13,26 քառակուսի մետր մակերեսով շինությունը հասցեավորել՝
   ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Մ. ՇՉԵԴՐԻՆԻ ՓՈՂՈՑ, 5Բ ՇԵՆՔ, 21/1 ԲՆԱԿԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«01» հունիսի 2023 թվականի N1385-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 792-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գործարանային նրբանցքի հարևանությամբ գտնվող 61.76 քառակուսի մետր մակերեսով հողամասը, նրա վրա ինքնակամ կառուցված 29.75 քառակուսի մետր արտաքին (22.6քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը, 18.48 քառակուսի մետր արտաքին (14.43 քառակուսի մետր ներքին) մակերեսով մառանը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N792-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել որոշման մեջ տեղ գտած բացթողման պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գործարանային նրբանցքի հարևանությամբ գտնվող 61.76 քառակուսի մետր մակերեսով հողամասը, նրա վրա ինքնակամ կառուցված 29.75 քառակուսի մետր արտաքին (22.6քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը, 18.48 քառակուսի մետր արտաքին (14.43 քառակուսի մետր ներքին) մակերեսով մառանը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N792-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.
   1) Նախաբանի վերջում լրացնել <<հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023KSZEUL ծածկագիրը >> բառերը և թվերը:

01.06.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» հունվարի 2023 թվականի N 1384-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՆՅԱՆ ՓՈՂՈՑ N30/1 ՀԱՍՑԵԻ 48,82ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՆՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ 48, 70 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ 309,9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՇՈՂԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ, ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, ՄԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, ՄԵՍՐՈՊ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Պարոնյան փողոց N30/1 հասցեի 309,9(երեքհայրուր ինն ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելին հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N09022017-08-0025վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> օրենքով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, ղեկավարվելով , <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 մայիսի 11-ի N89-Ա որոշումը և քաղաքացի Շողիկ Վարդանյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2016 թվականի նոյեմբերի 22-ին N14264 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Պարոնյան N30/1 հասցեի, օրինականացված 48,82(քառասունութ ամբողջ ութսուներկու հարյուրերորդական)քառակուսի մետր արտաքին մակերեսով 48, 70(քառասունութ ամբողջ յոթանասուն հարյուրերորդական) քառակուսի ներքին մակերեսով բնակելի շինությունները մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող վաճառքի գներով՝ որը կազմում է 248982(երկուհարյուր քառասունութ հազար ինը հարյուր ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Շողիկ Վարդանյանին, Սուրեն Խաչատրյանին , Մարինե Խաչատրյանին , Մեսրոպ Խաչատրյանին Հովհաննես Գևորգյանին

2. Գյումրի քաղաքի Պարոնյան փողոց N30/1 հասցեի 309,9(երեքհարյուր ինն ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող վաճառքի գներով՝ տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը կազմում է 1914 (մեկ հազար ինը հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը 593149(հինգ հարյուր իննսուներեք հազար հարյուր քառասունինը) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Շողիկ Վարդանյանին, Սուրեն Խաչատրյանին , Մարինե Խաչատրյանին , Մեսրոպ Խաչատրյանին Հովհաննես Գևորգյանին:

3. Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Շողիկ Վարդանյանը, պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:

4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացիներ Շողիկ Վարդանյանին, Սուրեն Խաչատրյանին , Մարինե Խաչատրյանին , Մեսրոպ Խաչատրյանին Հովհաննես Գևորգյանին միջոցների հաշվին:

Հանձնարարական գրություն

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«01» «հունիսի» 2023 թվական N 1383-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 630 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Գայանե Վալիկոյի Սարգսյանը (նույնականացման քարտ՝ 001100817, տրված՝ 25.03.2014թ., 016 կողմից) Հայաստանի Հանրապետության Գյումրու քաղաքապետի 1997 թվականի օգոստոսի 30-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 630 որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) փոփոխություն կատարելու խնդրանքով:

Որոշման մեջ տեղի է ունեցել վրիպակ՝ մասնավորապես որոշման 1167–րդ մասի 2-րդ կետում Սարգսյան Անժելա Մնացականի անունը «Անժելյա»–ի փոխարեն գրվել է «Անժելա» (հիմք՝ մահվան վկայական ԱԲ № 172116, տրված՝ 05.06.2015 թ., Գյումրու ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, 1-ին մասի, 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Գայանե Վալիկոյի Սարգսյանի 2023 թվականի մայիսի 31-ի դիմումը՝ (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված՝ թիվ N 10755 թվագրությամբ)՝ **որոշում եմ.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 1997 թվականի օգոստոսի 30-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ N 630 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման 1167–րդ մասի 2-րդ կետում՝ Սարգսյան Անժելա Մնացականի անվանման մեջ՝ «Անժելա» բառը փոխարինել «Անժելյա» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գայանե Վալիկոյի Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

01.06.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՄԱՍՈՎ ԿԱՐՃԵԼՈՒ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«01»«հունիսի» 2023 թվական N 1382 -Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի մայիսի 30-ին, ժամը 11:00-ին Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Համլետ Պարույրի Ավետիսյանի /հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Գոգոլի փողոց, տուն 70, նույնականացման քարտ՝ 005992151 տրված՝ 29.06.2017 թվականին 016-ի կողմից/ ներկայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով ՀՀ Շիրակի մարզի, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի մայիսի 10-ին կազմված՝ քաղաքացի Համլետ Պարույրի Ավետիսյանի կողմից Օրենսգրքի՝ 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման բաժնի աշխատակիցներ Կարեն Մովսիսյանը և Արմեն Մովսիսյանը իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս՝ 2023 թվականի մայիսի 10-ին հայտնաբերել և օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմվել են քաղաքացի՝ Համլետ Պարույրի

Ավետիսյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2023 թվականի մայիսի 10-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Համլետ Պարույրի Ավետիսյանը Գյումրի քաղաքի, Ջիվանի փողոցի 83 հասցեում գտնվող շինության հյուսիսային և արևմտյան հատվածի 9 պատուհանների և դռան վրա ինքնակամ տեղադրել է թվով 10 մարկիզաներ, առանց համապատասխան շինարարական թույլտվության:

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ջիվանի փողոցի 83 հասցեում գտնվող շինությունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Համլետ Պարույրի Ավետիսյանին:

Քաղաքացի Համլետ Ավետիսյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով:

Քաղաքացի Համլետ Ավետիսյանը արձանագրության կրկնօրինակը ստացել է, ստանալու փաստը հավաստվում է իր կողմից կատարած ստորագրությամբ:

Քաղաքացի Համլետ Ավետիսյանը հարուցված վարչական վարույթի լսումների տեղի և ժամի մասի պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը ապահովվել է փոստային ծառայության միջոցով:

Քաղաքացի՝ Համլետ Ավետիսյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի մայիսի 10-ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված լուսանկարներով:

Քաղաքացի Համլետ Ավետիսյանը վարչական վարույթի ժամանակ հայտնեց, որ ամբողջովին ընդունում է այն փաստը, որ Գյումրի քաղաքի, Ջիվանի փողոցի թիվ 83 հասցեում իր կողմից կատարվել է վարչական իրավախախտում:

Օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ Եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Օրենսգրքի 33-հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը(...):

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր լիազորությունների շրջանակներում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը(. . .):

Ի նկատի ունենալով վերոգրյալը գտնում եմ, որ առկա է օրենսգրքի 21-րդ հոդվածով սահմանված նվազ նշանակություն ունեցող վարչական իրավախախտում կատարելու հանգամանք, համաձայն որի՝ եթե կատարված վարչական

իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ (...):

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը ղեկավարվելով Օրենսգրքի 21-րդ, 33-րդ հոդվածի 1–ին և 2-րդ կետերով, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 2–րդ կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-րդ կետի բ ենթակետով, 55–րդ, 58–րդ հոդվածի 1–ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի Համլետ Պարույրի Ավետիսյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը տույժի մասով կարճել:
2. Պարտավորեցնել՝ քաղաքացի Համլետ Պարույրի Ավետիսյանին սույն որոշումը ստանալուց հետո՝ երկամսյա ժամկետում վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի Համլետ Ավետիսյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Համլետ Պարույրի Ավետիսյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի Համլետ Պարույրի Ավետիսյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:

01.06.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբեր 2023 թվականի № 1381-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 12 ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԹՎՈՎ 6 (ՎԵՑ) ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի տնօրեն Հայկակ Արշամյանի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված №10460 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված շինության բաժանման սխեման և հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Մուշ-2 թաղամասի 1-ին փողոց, 12 բնակելի համալիր և մանկապարտեզ անշարժ գույքից (վկայական №14122022-08-0083) թվով 6 (վեց) մասերի բաժանված շինությունները հասցեավորել համաձայն հավելվածի.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2023թ. հունվարի 01-ի
N 1381 Ա որոշման

Գյումրի քաղաք, Մուշ-2 թաղամասի 1-ին փողոց, 12 բնակելի համալիր և մանկապարտեզ անշարժ գույքից թվով 6 (վեց) մասերի բաժանված շինությունների հասցեավորում

№	Շինության մակերեսը (քառակուսի մետր)	Շինության հասցեն
1.	278,82	ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Հալաբյան փողոց, 1/1 շենք, 1/2 նկուղ
2.	82,44	ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Հալաբյան փողոց, 1/1 շենք, 19 ձեղնահարկ
3.	63,29	ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Հալաբյան փողոց, 1/1 շենք, 20 ձեղնահարկ
4.	82,44	ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Հալաբյան փողոց, 1 շենք, 19 ձեղնահարկ
5.	63,29	ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Հալաբյան փողոց, 1 շենք, 20 ձեղնահարկ
6.	3766,76	ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մուշ-2 թաղամասի 1-ին փողոց, 12 շինություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» մայիսի 2023 թվականի N 1380-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ ՓՈՂՈՑԻ N 48/6 ՀԱՍՑԵԻ 62,38 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոցի N 48/5 հասցեի 240,0 (երկու հարյուր քառասուն) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Արամ Դավթի Մխոյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 23022023-08-0042 վկայական):

Քաղաքացի Արամ Դավթի Մխոյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 10032023-08-0051 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոցի N 48/6 հասցեի 62,38 (վաթսուներկու ամբողջ երեսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 11-ի N 98-Ա որոշումը և քաղաքացի Արամ Դավթի Մխոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի ապրիլի 05-ին N 6014 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Արամ Դավթի Մխոյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոցի N 48/5 հասցեի 240,0 (երկու հարյուր քառասուն) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Խրիմյան Հայրիկ փողոցի N 48/6 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 62,38 (վաթսուներկու ամբողջ երեսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես սեփականություն, հողամասը ընդլայնելու նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 426324 (չորս հարյուր քսանվեց հազար երեք հարյուր քսանչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Արամ Դավթի Մխոյանի միջոցների հաշվին
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արամ Դավթի Մխոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«31» մայիսի 2023 թվականի N1379-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ 6-ՐԴ ՇԱՐՔ N14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 906.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 195.86 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (161.61 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի 6-րդ շարք N14 հասցեում, 906.9(ինը հարյուր վեց ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 195.86(հարյուր իննսունհինգ ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (161.61 (հարյուր վաթսունմեկ ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն որը տիրապետում և օգտագործում են քաղաքացիներ Թամարա և Ռաֆիկ Պողոսյանները:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով. համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023BFKLDT ծածկագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի 6րդ շարք N14 հասցեում, 906.9(ինը հարյուր վեց ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 195.86(հարյուր իննսունհինգ ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (161.61 (հարյուր վաթսունմեկ ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Թամարա և Ռաֆիկ Պողոսյաններին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

31.05.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» մարտի 2023 **թվականի** N 1378-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈԶԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՐՎԱԾ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՆՅԱՆ ՓՈՂՈՑ N 44 ՀԱՍՑԵՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 29,01 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Պարոնյան փողոց N 44 հասցեով բնակելի ֆոնդի տունը նվիրատրվել է քաղաքացի Ռոզա Վոլոդյայի Մկրտչյանին (հիմք՝ Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 27-ի N 747-Ա որոշում):

Քաղաքացի Ռոզա Մկրտչյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված բնակելի տան պահպանման և սպասարկման համար , փաստացի զբաղեցրած 29,01 (քսանինն ամբողջ մեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 30012023-08-0033 վկայական) ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ օտարվող առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով , ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հողային օրենսգրքի 66-րդ հովածի 1-ին մասի 3-րդ կետով և 2-րդ մասով, 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացի Ռոզա Մկրտչյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը ՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի օգոստոսի 23-ին N 14794 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Ռոզա Վոլոդյայի Մկրտչյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել որպես սեփականություն իրենց նվիրատրված Պարոնյան փողոց N 44 հասցեով հանրային բնակելի ֆոնդի տան պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 29,01(քսանինն ամբողջ մեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը որպես սեփականություն՝ համաձայն կից տրվող հատակագծային ուրվանկարի:
2. Հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 305011(երեք հարյուր հինգ հազար տասնմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ :

3. Սահմանված կարգով կնքել հողի առուվաճառքի պայմանագիր (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին) :
4. Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Ռոզա Մկրտչյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռոզա Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

31.05.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«31» մայիսի 2023 թվականի N 1377-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ ԱՐՄԵՆ ՀԵՆՐԻԿԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի պետի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի առաջատար մասնագետ Արմեն Հենրիկի Մովսիսյանին՝ 2023 թվականի հունիսի 1-ից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Հենրիկի Մովսիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

31.05.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«31» մայիսի 2023 թվականի N 1376-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 04-Ի N 263-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 04-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը նոր խմբագրությամբ հաստատելու և Գյումրի համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 22-ի N 516-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 263-Ա որոշումը լրացնել նոր N 171 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

31.05.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք. Գյումրի 2023թ.

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2023 թվականի մայիսի 31 -ի N 137-Ա որոշման
<<Հավելված N 171
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2020 թվականի փետրվարի 04 -ի N 263 -Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի (այսուհետ՝ բաժին) պետ, 2.1-24

1.2. Ենթակա և հաշվետու է
Աշխատակազմի քարտուղարին

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները
Բաժնի գլխավոր մասնագետը կամ բաժնի առաջատար մասնագետը

1.4. Աշխատավայրը
Գյումրու համայնքապետարան

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները
Բաժնի պետը՝

1) կազմակերպում է բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում է դրանց ժամանակին և պատշաճ որակով կատարումը,

2) քարտուղարին է ներկայացնում բաժնի աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում, բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ,

3) անհրաժեշտության դեպքում՝ համայնքի ղեկավարի և քարտուղարի համաձայնությամբ և հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին, այդ մարմիններից, պաշտոնատար անձանցից,

կազմակերպություններից ստանալով բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր,

4) ստորագրում է իր և բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը,

5) համայնքի ղեկավարի և (կամ) քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի մշակումը և նյութերի փորձաքննությունը,

6) քարտուղարին ներկայացնում է առաջարկություններ՝ բաժնի համայնքային ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ատեստավորելու, վերապատրաստելու, խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում է բաժնի համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը,

7) կազմակերպում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում աշխատակազմի քարտուղարին,

8) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմակերպում է խորհրդակցություններ, հանդիպումներ, ապահովում է այդ խորհրդակցությունների, հանդիպումների արձանագրությունների կազմումը,

17) օրենքով սահմանված դեպքում և կարգով վերահսկում է ապօրինի հողօգտագործումները կանխարգելելու, կասեցնելու և վերացնելու աշխատանքները,

18) վերահսկում է ինքնակամ շինարարության կանխարգելումը,կասեցումը և օրենքով սահմանված կարգով դրանց հետևանքների վերացումն ապահովելու համար անհրաժեշտ աշխատանքների կատարումը,

19) իրականացնում է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ և օրենքով սահմանված կարգով ներկայացնում համայնքի ղեկավարին,

20) վերահսկում է քաղաքի տարածքում տարբեր ժամանակավոր օբյեկտների ապօրինի տեղադրման կանխարգելման աշխատանքները,

24) վերահսկում է համայնքի ղեկավարի որոշմամբ քաղաքի ճարտարապետական տեսքը խաթարող ժամանակավոր օբյեկտների տեղահանման գործընթացը,

25) վերահսկում է քաղաքի ոչ թույլատրելի վայրերում իրականացվող բացօթյա առևտրի կանխարգելման աշխատանքները,

28) կատարում է համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները,ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ,այլ իրավական ակտերով նախատեսված այլ աշխատանքներ,

29) իրականացնում է օրենքով, իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

Բաժնի պետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

3. Կազմակերպական շրջանակը

3.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

1) բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են բաժնի աշխատողները,

2) պատասխանատվություն է կրում օրենքների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու, բաժնի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար,

3) բաժնում կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է աշխատանքները,

4) կատարում է բաժնի գործունեության բնագավառում վարվող քաղաքականության մասով՝ համայնքի ղեկավարի, իսկ համայնքային ծառայության ղեկավարման և կազմակերպման մասով՝ աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները,

3.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

1) լուծում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ.

2)բաժնի պետը իրեն անմիջականորեն ենթակա աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:

3.3. Շփումները և ներկայացուցչությունը

1) աշխատակազմի ներսում իր լիազորությունների շրջանակներում շփվում է համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու անդամների, աշխատակազմում հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի քարտուղարի, ինչպես նաև աշխատակազմի ստորաբաժանումների պետերի և այլ աշխատողների հետ,

2) բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում,

3) ապահովում է բաժնի փոխհարաբերությունները աշխատակազմի այլ ստորաբաժանումների հետ,

4) համայնքի ղեկավարի և (կամ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աշխատակազմից դուրս իր լիազորությունների շրջանակներում շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության մյուս համայնքների և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով և այլն:

3.4. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

1) Համայնքի ղեկավարի և (կամ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմինների և աշխատակազմի ռազմավարական, կազմակերպական և մասնագիտական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում և գնահատում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրները, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ:

4. Պաշտոնին ներկայացվող պահանջները

4.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

4.2.Մասնագիտական գիտելիքները և հմտությունները

1) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Արխիվային գործի մասին», «Լեզվի մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» , «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

2) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,

3) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

4) տիրապետում է ռուսերեն (կարդում, կարողանում է բացատրվել) լեզվին:

4.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

5.Համայնքային ծառայության դասային աստիճանը

Բաժնի պետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

>>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» մայիսի 2023 **թվականի** N 1375-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑԻ N 11/16 ՀԱՍՑԵԻ 9.19 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Պարույր Սևակի փողոցի N 11/12 հասցեի 820.0 (ութ հարյուր քսան) քառակուսի մետր մակերեսով հողամասը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Սարգիս Հակոբի Դեմիրճյանին (1/2 մաս) և Ազնիվ Գևորգի Բերբերյանին (1/2 մաս) (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20012015-08-0014 վկայական):

Քաղաքացի Սարգիս Հակոբի Դեմիրճյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 30032023-08-0020 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Պարույր Սևակի փողոցի N 11/16 հասցեի 9.19 (ինն ամբողջ տասնինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 11-ի N 93-Ա որոշումը և քաղաքացի Սարգիս Հակոբի Դեմիրճյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հունվարի 16-ին N 518 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Սարգիս Հակոբի Դեմիրճյանին (1/2 մաս) և Ազնիվ Գևորգի Բերբերյանին (1/2 մաս) ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Պարույր Սևակի փողոցի N 11/12 հասցեի 820.0 (ութ հարյուր քսան) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Պարույր Սևակի փողոցի N 11/16 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 9.19 (ինն ամբողջ տասնինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ հողամասի ընդլայնման նպատակով, որպես ընդհանուր բաժնային սեփականություն:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 62805 (վաթսուներկու հազար ութ հարյուր հինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացիներ Սարգիս Հակոբի Դեմիրճյանի և Ազնիվ Գևորգի Բերբերյանի միջոցների հաշվին
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Սարգիս Հակոբի Դեմիրճյանին և Ազնիվ Գևորգի Բերբերյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.05.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00: Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» մայիսի 2023 թվականի N 1374-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ N1/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 27.95 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 27.95 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (21.83ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց N1/11 հասցեում, 27.95(քսանյոթ ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 27.95(քսանյոթ ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (21.83 (քսանմեկ ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Արսեն Գևորգյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով. համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023C59FGE ծածկագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց N1/11 հասցեում, 27.95(քսանյոթ ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 27.95(քսանյոթ ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (21.83(քսանմեկ ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տալիս կառույցն իրականացրած քաղաքացի Արսեն Գևորգյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. ՈՒԺը կորցրած ճանաչել Գյումրու քաղաքապետի 2015 ապրիլի 01-ի <<Քաղաքացի Արսեն Գևորգյանին ժամանակավոր մետաղական ավտոտնակ տեղադրելու նպատակով Գյումրի համայնքին պատկանող Ղանդիլյան փողոց N1/11 հասցեի 19.9 քառակուսի մետր մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին >> N 613-Ա որոշումը:
6. Լուծել հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման 2015 թվականի ապրիլի 201-ի N2637 պայմանագիրը:
7. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N27042015-08-0024 վկայականը չեղարկելու համար:

30.05.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» մայիսի 2023 թվականի N 1373-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՂՅՈՒՍԻ ՓՈՂՈՑ N 141/4 ՀԱՍՑԵԻ 293.69 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 170.55 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (138.7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԻԹԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աղյուսի փողոց N141/4 հասցեի 293.69(երկու հարյուր իննսուներեք ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է համայնքային սեփականություն(հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N30032023-08-0046 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, , համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 11-ի N89-Ա որոշումը և քաղաքացի Վարդիթեր Մկրտչյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականին N16196 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի քաղաքի Աղյուսի փողոց N141/4 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 170.55 (հարյուր յոթանասուն ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (138.7(հարյուր երեսունութ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը 855990 (ութ հարյուր հիսունհինգ հազար ինը հարյուր իննսուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Վարդիթեր Մկրտչյանին:
2. Գյումրի քաղաքի Աղյուսի փողոց N141/4 հասցեի 293.69(երկու հարյուր իննսուներեք ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը օտարման պահին կազմում է 2888 (երկու հազար ութ հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 848177 (ութ հարյուր քառասունութ հազար հարյուր յոթանասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Վարդիթեր Մկրտչյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Վարդիթեր Մկրտչյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Կարեն Կարապետյանի միջոցների հաշվին:

29.05.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» մայիսի 2023 թվականի N 1372-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 05-Ի N 295-Ա ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N 841-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով քաղաքացի Ժենյա Ղուկասյանի՝ դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 11-ին N 8925 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 05-ի <<Քաղաքացիներ Հովհաննես Պարզիկի Ղուկասյանին և Ժենյա Սարգսի Ղուկասյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան 1-ին թաղամասի N 96/9 հասցեի 217,11 քառակուսի մետր մակերեսով համայքապատկան հողամասը բնակելի տան ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին>> N 295-Ա և 2023 թվականի մարտի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 05-ի N 295-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> N 841-Ա որոշումները:

30.05.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» Մայիսի 2023 թվականի N 1371-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ N71 ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 45.71 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 91.42 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (76.72 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲՈՎ ՄԱՌԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Կամոյի փողոց N71 շենքի հարևանությամբ 45.71(քառասունհինգ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 91.42 (իննսունմեկ ամբողջ քառասուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (76.72 (յոթանասունվեց ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ և բաց պատշգամբով մառան, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Գրիգոր Մարտիրոսյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով. համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023MFS2ST ծածկագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի քաղաքի Կամոյի փողոց N71 շենքի հարևանությամբ, 45.71(քառասունհինգ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 91.42 (իննսունմեկ ամբողջ քառասուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (76.72 (յոթանասունվեց ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը և բաց պատշգամբով մառանը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Գրիգոր Մարտիրոսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

29.05.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» մայիսի 2023 թվականի N 1370-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 90/5 ՀԱՍՑԵԻ 112.21 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (99.14 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, 219.77 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՊԱՊՈՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 90/5 հասցեի 219.77 (երկու հարյուր տասնինն ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 19042018-08-0010 վկայական):

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 11-ի N 89-Ա որոշումը և քաղաքացի Գուրգեն Հովհաննեսի Պապոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2018 թվականի մարտի 02 N 2613 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 90/5 հասցեի 112.21 (մեկ հարյուր տասներկու ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (99.14 (իննսունինն ամբողջ տասնչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 437619 (չորս հարյուր երեսունյոթ հազար վեց հարյուր տասնինը) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի տունն ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Գուրգեն Հովհաննեսի Պապոյանին:
2. Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 90/5 հասցեի 219.77 (երկու հարյուր տասնինն ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող վաճառքի գներով՝ տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը կազմում է 1242 (մեկ հազար երկու հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 272954 (երկու հարյուր յոթանասուներկու հազար ինը հարյուր հիսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Գուրգեն Հովհաննեսի Պապոյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո քաղաքացի Գուրգեն Հովհաննեսի Պապոյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գուրգեն Հովհաննեսի Պապոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Գուրգեն Հովհաննեսի Պապոյանի միջոցների հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» Դեկտեմբեր 2023 **թվականի** N 1369-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՆՋՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 5/8 ՀԱՍՑԵԻ 108.79 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (91.07 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ, 108.79 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԿՐՏԻՉ ՄԻՔԱՅԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Մնջոյան փողոցի N 5/8 հասցեի 108.79 (մեկ հարյուր ութ ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով ավտոտնակը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 03042023-08-0035 վկայական):

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 11-ի N 89-Ա որոշումը և քաղաքացի Մկրտիչ Միքայելի Հովհաննիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2021 թվականին N 1205 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Մնջոյան փողոցի N 5/8 հասցեի 108.79 (մեկ հարյուր ութ ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (91.07 (իննսունմեկ ամբողջ յոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 141427 (մեկ հարյուր քառասունմեկ հազար չորս հարյուր քսանյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ավտոտնակն ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Մկրտիչ Միքայելի Հովհաննիսյանին:
2. Գյումրի քաղաքի Մնջոյան փողոցի N 5/8 հասցեի 108.79 (մեկ հարյուր ութ ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող վաճառքի գներով՝ տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը կազմում է 1242 (մեկ հազար երկու հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 135118 (մեկ հարյուր երեսունհինգ հազար մեկ հարյուր տասնութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Մկրտիչ Միքայելի Հովհաննիսյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո քաղաքացի Մկրտիչ Միքայելի Հովհաննիսյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մկրտիչ Միքայելի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Մկրտիչ Միքայելի Հովհաննիսյանի միջոցների հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» Դեկտեմբեր 2023 **թվականի** N 1368-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 3/19 ՀԱՍՑԵԻ 35.27 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի N 3/18 հասցեի 615.7 (վեց հարյուր տասնհինգ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Էդգար Արտաշեսի Մխիթարյանին և Դիանա Մելքոնի Մխիթարյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 16122022-08-0039 վկայական):

Քաղաքացի Էդգար Արտաշեսի Մխիթարյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 06042023-08-0026 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի N 3/19 հասցեի 35.27 (երեսունհինգ ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 11-ի N 95-Ա որոշումը և քաղաքացի Էդգար Արտաշեսի Մխիթարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հունվարի 5-ին N 126 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Էդգար Արտաշեսի Մխիթարյանին և Դիանա Մելքոնի Մխիթարյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի N 3/18 հասցեի 615.7 (վեց հարյուր տասնհինգ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Խանջյան փողոցի N 3/19 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 35.27 (երեսունհինգ ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ հողամասի ընդլայնման նպատակով, որպես ընդհանուր համատեղ սեփականություն:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 241036 (երկու հարյուր քառասունմեկ հազար երեսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացիներ Էդգար Արտաշեսի Մխիթարյանի և Դիանա Մելքոնի Մխիթարյանի միջոցների հաշվին
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Էդգար Արտաշեսի Մխիթարյանին և Դիանա Մելքոնի Մխիթարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.05.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» Հոկտեմբեր 2023 **թվականի** N 1367-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 3/21 ՀԱՍՑԵԻ 167.53 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի N 3/12 հասցեի 201.95 (երկու հարյուր մեկ ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Արամայիս Արթուրի Մխիթարյանին և Աիդա Եղիշեի Գևորգյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 11122020-08-0020 վկայական):

Քաղաքացի Արամայիս Արթուրի Մխիթարյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 12042023-08-0028 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի N 3/21 հասցեի 167.53 (մեկ հարյուր վաթսունյոթ ամբողջ հիսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 11-ի N 97-Ա որոշումը և քաղաքացի Արամայիս Արթուրի Մխիթարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի ապրիլի 26-ին N 7569 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Արամայիս Արթուրի Մխիթարյանին և Աիդա Եղիշեի Գևորգյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի N 3/12 հասցեի 201.95 (երկու հարյուր մեկ ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Խանջյան փողոցի N 3/21 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 167.53 (մեկ հարյուր վաթսունյոթ ամբողջ հիսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ հողամասի ընդլայնման նպատակով, որպես ընդհանուր համատեղ սեփականություն:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 1144900 (մեկ միլիոն մեկ հարյուր քառասունչորս հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացիներ Արամայիս Արթուրի Մխիթարյանի և Աիդա Եղիշեի Գևորգյանի միջոցների հաշվին
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Արամայիս Արթուրի Մխիթարյանին և Աիդա Եղիշեի Գևորգյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.05.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» Մայիսի 2023 թվականի N 1366-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 3/20 ՀԱՍՑԵԻ 215.23 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի N 3/7 հասցեի 322.44 (երեք հարյուր քսաներկու ամբողջ քառասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Անահիտ Ստեփանի Դիլանյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 11042016-08-0033 վկայական):

Քաղաքացի Անահիտ Ստեփանի Դիլանյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20042023-08-0036 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի N 3/20 հասցեի 215.23 (երկու հարյուր տասնհինգ ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 11-ի N 96-Ա որոշումը և քաղաքացի Անահիտ Ստեփանի Դիլանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի ապրիլի 26-ին N 7566 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Անահիտ Ստեփանի Դիլանյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի N 3/7 հասցեի 322.44 (երեք հարյուր քսաներկու ամբողջ քառասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տանը հարակից, Խանջյան փողոցի N 3/20 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 215.23 (երկու հարյուր տասնհինգ ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես բակ:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 1470882 (մեկ միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար ութ հարյուր ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Անահիտ Ստեփանի Դիլանյանի միջոցների հաշվին
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Անահիտ Ստեփանի Դիլանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.05.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» Մայիսի 2023 **թվականի** N 1365-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊՈՂՈՏԱՅԻ N 39/1 ՀԱՍՑԵԻ 9.46 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտայի N 39 հասցեի 174.77 (մեկ հարյուր յոթանասունչորս ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Վահան Արտաշեսի Շալոյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 03022020-08-0027 վկայական):

Քաղաքացի Վահան Արտաշեսի Շալոյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 21042023-08-0029 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտայի N 39/1 հասցեի 9.46 (ինն ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 11-ի N 94-Ա որոշումը և քաղաքացի Վահան Արտաշեսի Շալոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի մարտի 15-ին N 4595 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Վահան Արտաշեսի Շալոյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտայի N 39 հասցեի 174.77 (մեկ հարյուր յոթանասունչորս ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տանը հարակից, Հաղթանակի պողոտայի N 39/1 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 9.46 (ինն ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես բակ:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 24889 (քսանչորս հազար ութ հարյուր ութսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 235450 (երկու հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Վահան Արտաշեսի Շալոյանի միջոցների հաշվին
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վահան Արտաշեսի Շալոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.05.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» մայիսի 2023 թվականի N 1364-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ N 40/1 ՀԱՍՑԵԻ 400.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի N 40/1 հասցեի 400.0 (չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի N 40/1 հասցեի 400.0 (չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

29.05.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» մայիսի 2023 **թվականի** N 1363-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱԼԱԲՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 5/7 ՀԱՍՑԵԻ 288.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Հալաբյան փողոցի N 5/7 հասցեի 288.0 (երկու հարյուր ութսունութ) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Հալաբյան փողոցի N 5/7 հասցեի 288.0 (երկու հարյուր ութսունութ) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գործառնական նշանակությունից փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

29.05.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» մայիսի 2023 թվականի N 1362Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԻՆԵ ԳՈՒՐԳԵՆԻ ՆԱՎՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 140.08 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 119.86 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Կարինե Գուրգենի Նավոյանին պատկանող (հիմք՝ ՀԽՍՀ ժող. դեպուտատների Ախուրյանի շրջխորհրդի գործկոմի 18.08.1990թ. թիվ 15 նիստի թիվ 16 արձանագրություն) Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի 2-րդ թաղամասում գտնվող հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 140.08 (մեկ հարյուր քառասուն ամբողջ ութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 119.86 (մեկ հարյուր տասնինն ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին քառակուսի մետր ներքին մակերեսով անավարտ բնակելի շինություն, որը հաշվառված է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում 2023MVZHU2 ծածկագրով:

Քաղաքացի Կարինե Գուրգենի Նավոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Կարինե Գուրգենի Նավոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 04-ին N 8280 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Կարինե Գուրգենի Նավոյանին պատկանող Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի 2-րդ թաղամասում գտնվող հողամասում ինքնակամ կառուցված 140.08 (մեկ հարյուր քառասուն ամբողջ ութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 119.86 (մեկ հարյուր տասնինն ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով անավարտ բնակելի շինությունը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 199194 (մեկ հարյուր իննսունինը հազար մեկ հարյուր իննսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Օրենքով սահմանված կարգով քաղաքացի Կարինե Գուրգենի Նավոյանին տրամադրել անավարտ բնակելի շինությունը ավարտին հասցնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և շինարարությունն ավարտելու ժամկետների վերաբերյալ տվյալներով:

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կարինե Գուրգենի Նավոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.05.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» Դեկտեմբեր 2023 թվականի N 1364.Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՆՈՒՆՅԱՆՑ ՓՈՂՈՑԻ N 42 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 105.01 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 23.32 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 20.82 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԽԱՆՈՒԹԸ, 0.27 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, 3.73 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇՎԱՔԱՐԱՆԸ, 6.95 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Կնունյանց փողոցի N 42 հասցեի բնակելի տան հողամասին կից 105.01 (մեկ հարյուր հինգ ամբողջ մեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 23.32 (քսաներեք ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 20.82 (քսան ամբողջ ութսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով խանութ, 0.27 (զրո ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տուն, 3.73 (երեք ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շվաքարան, 6.95 (վեց ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպ (հաշվառված Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում 2023ATCZVP ծածկագրով), որոնք տիրապետում և օգտագործում են քաղաքացիներ Տատյանա Մամիկոնի Թումանյանը և Դանիել Հրանտի Գալլան:

Նկատի ունենալով, որ շինությունների պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Կնունյանց փողոցի N 42 հասցեի բնակելի տան հողամասին կից 23.32 (քսաներեք ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 23.32 (քսաներեք ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 20.82 (քսան ամբողջ ութսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով խանութը, 0.27 (զրո ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը, 3.73 (երեք ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շվաքարանը, 6.95 (վեց ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացիներ Տատյանա Մամիկոնի Թումանյանին և Դանիել Հրանտի Գալլային:

3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

24.05.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» հունիսի 2023 թվականի N 1420-Ա

2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՏՐՎԱԾ N82/22 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Հրանտ Ներսեսի և Սիլվարդ Կոլյայի Ներսիսյաններին Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոց №3/9 և Ս. Մատնիշյան փողոց №34/1 հասցեներում ավտոտնակի կառուցման համար 2022 թվականի սեպտեմբերի 19-ին տրվել է N82/22 շինարարության թույլտվությունը: Ըստ շինարարության թույլտվության շինարարության տևողությունը սահմանվել է 3/երեք/ ամիս:

Սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չեն ավարտվել, և կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու 2.5/երկու ամբողջ հինգ/ ամսով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2022 թվականի սեպտեմբերի 19-ին տրված N82/22 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 2.5/երկու ամբողջ հինգ/ ամսով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

06.06.2023

X

2023թ. ք.Գյումրի

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հունիսի 2023 թվականի N 1419-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 07-Ի N 895-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 07-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի հարևանությամբ 57,95 քառակուսի մետր մակերեսով հողամասը, նրա վրա ինքնակամ կառուցված 111,42 քառակուսի մետր արտաքին (94,01 քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը և աստիճանը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին>> N 895-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 07-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի հարևանությամբ 57,95 քառակուսի մետր մակերեսով հողամասը, նրա վրա ինքնակամ կառուցված 111,42 քառակուսի մետր արտաքին (94,01 քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը և աստիճանը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին>> N 895-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) նախաբանում <<կետով>> բառից հետո լրացնել <<և հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023LRWN5W ծածկագիրը>> բառերը և թվերը:

06.06.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հունիսի 2023 թվականի N 1418-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 08 -Ի N 1155-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 08-ի <<Քաղաքացի Մկրտիչ Գետեոնի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ժդանովի փողոց N 10 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 52,6 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները օրինական ճանաչելու մասին>> N 1155-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 17/05/2023 թվականի N Կ-17052023-08-0060 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 08-ի <<Քաղաքացի Մկրտիչ Գետեոնի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ժդանովի փողոց N 10 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 52,6 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները օրինական ճանաչելու մասին>> N 1155-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

   1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին և 3-րդ կետերում <<Գետեոնի>> բառը փոխարինել <<Գետևոնի>> բառով :

06.06.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հունիսի 2023 թվականի N 1417-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 05 -Ի N 684-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի ապրիլի 05-ի <<Քաղաքացի Աննա Ասմարյանին պատկանող Գյումրի քաղաքի Մուսաելյան փողոց N 64 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 380,83 քառակուսի մետր մակերեսով շինությունները, ինքնակամ բացված 4 (չորս) պատուհանները օրինական ճանաչելու մասին>> N 684-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 03/05/2023 թվականի N Կ-03052023-08-0085 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի ապրիլի 05-ի <<Քաղաքացի Աննա Ասմարյանին պատկանող Գյումրի քաղաքի Մուսաելյան փողոց N 64 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 380,83 քառակուսի մետր մակերեսով շինությունները, ինքնակամ բացված 4 (չորս) պատուհանները օրինական ճանաչելու մասին>> N 684-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) նախաբանում <<թվագրմամբ>> բառից հետո լրացնել <<և հիմք՝ ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 20235NBZRM ծածկագիրը>> բառերը և թիվը:

06.06.2023

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» հունիսի 2023 թվականի N 1416-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ N21 ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 46.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 46.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (39.28 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց N21 շենքի հարևանությամբ 46.4(քառասունվեց ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 46.4(քառասունվեց ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր արտաքին (39.28 (երեսունինը ամբողջ քսանութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Արթուր Հովակիմյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով. համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 20238JV3CN ծածկագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց N21 շենքի հարևանությամբ, 46.4(քառասունվեց ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 46.4(քառասունվեց ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր արտաքին (39.28 (երեսունինը ամբողջ քսանութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Արթուր Հովակիմյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

06.06.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» հունիսի 2023 թվականի N 1415-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀԵՆՐԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ(1/2) ԵՎ ԱՐՄԻԿ ԱՐՄԵՆԱԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ (1/2) ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌԱՍԿԱՏԼՅԱՆ ՓՈՂՈՑ N33 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 125.13 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 (ՄԵԿ) ՊԱՏՈՒՀԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 121.17 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Հենրիկ Խաչատուրի Մնացականյանին (1/2) և Արմիկ Արմենակի Դավթյանին (1/2) պատկանող Գյումրի քաղաք Ռասկատլյան փողոց N33 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված է 125.13(հարյուր քսանհինգ ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինություններ, ինքնակամ բացված է 1 (մեկ) պատուհան և օրինական հողամասին կից, ավել օգտագործվում է 121.17(հարյուր քսանմեկ ամբողջ տասնյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացիներ Հենրիկ Խաչատուրի Մնացականյանի և Արմիկ Արմենակի Դավթյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի և հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023LN68PY, 2023DQSXLU ծածկագրերը, քաղաքացիներ Հենրիկ Խաչատուրի Մնացականյանի և Արմիկ Արմենակի Դավթյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N79 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացիներ Հենրիկ Խաչատուրի Մնացականյանի (ծնված 1942 թվականի հոկտեմբերի 18-ին) և Արմիկ Արմենակի Դավթյանի (ծնված 1946 թվականի սեպտեմբերի 01-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Ռասկատլյան փողոց N33 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 121.17(հարյուր քսանմեկ ամբողջ տասնյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա շինության նկատմամբ:
2. Գյումրի քաղաքի Ռասկատլյան փողոց N33 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 125.13(հարյուր քսանհինգ ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունները, ինքնակամ բացված 1 (մեկ) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 1969 (հազար ինը հարյուր վաթսունինը) Հայաստանին Հանրապետության դրամ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Հենրիկ Խաչատուրի Մնացականյանին և Արմիկ Արմենակի Դավթյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

06.06.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» հունիսի 2023 թվականի N 1419-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ 209/287 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 276.24 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 159.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (136.03 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Մովսես Խորենացու փողոց 209/287 հասցեում, 276.24(երկու հարյուր յոթանասունվեց ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 159.8(հարյուր հիսունինը ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր արտաքին (136.03 (հարյուր երեսունվեց ամբողջ երեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն որը տիրապետում և օգտագործում են քաղաքացի Վալերի Հովսեփյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով. համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023KJNPVR ծածկագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի քաղաքի Մովսես Խորենացու փողոց 209/287 հասցեում, 276.24(երկու հարյուր յոթանասունվեց ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 159.8(հարյուր հիսունինը ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր արտաքին (136.03 (հարյուր երեսունվեց ամբողջ երեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Վալերի Հովսեփյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

06.06.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ի Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» հունիսի 2023 **թվական** N 1413.Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԱ ՄԿՐՏԻՉԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ,ՆԱՐԻՆԵ ՆԻԿՈԼԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ և ՄԿՐՏԻՉ ՍՈՒՐԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 1255-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Անահիտ Պետրոսյանը Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ղեկավարի 2015 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը քաղաքացիներ Արա Մկրտիչի Հովհաննիսյանին,Նարինե Նիկոլի Հովհաննիսյանին և Մկրտիչ Սուրենի Հովհաննիսյանին նվիրատվության եղանակով օտարելու մասին» թիվ 1255-Ա որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) փոփոխություն կատարելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ,3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Անահիտ Պետրոսյանի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված 2023 թվականի մայիսի 19-ի թիվ 9501 թվագրությամբ դիմումի հիմքով հարուցված վարչական վարույթի արձանագրությունը, քաղաքացի Մկրտիչ Հովհաննիսյանի մահվան վկայականի (I-ԿՄ No 541764) պատճենը՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ղեկավարի 2015 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը քաղաքացիներ Արա Մկրտիչի Հովհաննիսյանին,Նարինե Նիկոլի Հովհաննիսյանին և Մկրտիչ Սուրենի Հովհաննիսյանին նվիրատվության եղանակով օտարելու մասին» թիվ 1255-Ա որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Հանել որոշման 1-կետի 3-րդ ենթակետը «3) Մկրտիչ Սուրենի Հովհաննիսյանին՝ ծնված 1951 թվականին» բառերը և թվերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Անահիտ Պետրոսյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից :

2023 թիվ Գյումրի համայնք

06.06.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հուլիսի 2023 թվական N 1412Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐՄԵՆ ԿԱՐԼԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ,ԱՆԱՀԻՏ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, ԷԴԳԱՐ ԱՐՄԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, ԿԱՐԼԵՆ ԱՐՄԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Արմեն Կարլենի Հովհաննիսյանը (անձնագիր՝ AT 0538281, տրված՝ 016-ի կողմից 10.08.2020թ., հաշվառված՝ ք. Գյումրի,Իսահակյան փող.2 շենք թիվ 11-12 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի ապրիլի 27-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Իսահակյան փողոց 2 շենք թիվ 11-12 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին՝ որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի մայիսի 26-ի գրությունը, 2023թվականի մայիսի 16-ի Մուշի անձնագրային բաժանմունքի N 8/12-1217 գրությունը, «Ախթամար» համատիրության 2023 թվականի մարտի 28-ի տեղեկանքը, Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մարտի 24-ի եզրակացությունը, 2023 թվականի մայիսի 15-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Գյումրի» ցանցի փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, Արմեն Կարլենի Հովհաննիսյանի, Անահիտ Վարազդատի Հովհաննիսյանի. Էդգար Արմենի Հովհաննիսյանի, Արտյոմ Արմենի Հովհաննիսյանի անձնագրերի, Կարեն Արմենի Հովհաննիսյանի նույնականացման քարտի, Էմիլի Արտյոմ Հովհաննիսյանի ծննդյան վկայականի պատճենները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2- րդ մասի,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի ապրիլի 27-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի մայիսի 31-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Արմեն Կարլենի Հովհաննիսյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Ք.Գյումրի Իսահակյան փողոց 2 շենք, թիվ 11 հասցեի 60.65 (վաթսուն ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1966020 վկայական):

բ) Գյումրու /Լենինականի/ Իսահակյան փողոցի 2 շենքի թիվ 11 և թիվ 12 բնակարանների բաշխման վերաբերյալ նյութերը արխիվում չեն պահպանվել (հիմք՝ '«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի մայիսի 26-ի գրություն):

գ) Գյումրի քաղաքի Իսահակյան 2 շենք թիվ 11-12 հասցեում հաշվառված բնակվում են՝ Արմեն Կարլենի Հովհաննիսյանը 1979 թվականից,Էդգար Արմենի Հովհաննիսյանը 2010 թվականից, Անահիտ Վարազդատի Հովհաննիսյանը 1987 թվականից, Էմիլի Արտյոմի Հովհաննիսյանը 2015 թվականից, Արտյոմ Արմենի Հովհաննիսյանը 2005 թվականից,Կարլեն Արմենի Հովհաննիսյանը 2005 թվականից (հիմք՝ 2023թվականի մայիսի 16-ի Մուշի անձնագրային բաժանմունքի N 8/12-1217 գրություն, «Ախթամար» համատիրության 2023 թվականի մարտի 28-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացիներ Արմեն Կարլենի Հովհաննիսյանի, Անահիտ Վարազդատի Հովհաննիսյանի, Էդգար Արմենի Հովհաննիսյանի, Կարլեն Արմենի Հովհաննիսյանի, Էմիլի Արտյոմի Հովհաննիսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ: Արտյոմ Արմենի Հովհաննիսյանի անվամբ Շիրակի մարզ քաղաք Գյումրի Մ.Ավետիսյան փողոց 11 շենք 6 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք: 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ քաղաք Գյումրի Մ.Ավետիսյան փողոց 11 շենք 6 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ: (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի ապրիլի 3-ի N ԱՏ-03042023-99-0406, N ԱՏ-03042023-99-0475, N ԱՏ-03042023-99-0413, 2023 թվականի ապրիլի 25-ի N ԱՏ-25042023-99-0152, 2023 թվականի մարտի 30-ի N ԱՏ-30032023-99-0390 տեղեկանքներ):

ե) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Իսահակյան 2 շենք թիվ 11-12 բնակարանի վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի, տեխնիկական վիճակը՝ բավարար, այն է՝ պահանջվում է կատարել շենքի հարդարանքը նորոգում՝ վնասված տարրերի վերականգնումով (հիմք՝ Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մարտի 24-ի-ի եզրակացություն:

զ) Քաղաքացի Արմեն Կարլենի Հովհաննիսյանը /ք. Գյումրի, Իսահակյան 2 շենք թիվ 11 բնակարան/ Գյումրու էլ. ցանցում 2002 թվականից միչև օրս հանդիսանում է բաժանորդ (հիմք՝«ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի մայիսի 15-ի փոխադարձ հաշվարկների ստուգման ակտ):

է) Քաղաքացի Արմեն Կարլենի Հովհաննիսյանի ընտանիքը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ,

բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի -ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

Քաղաքացի Արտյոմ Արմենի Հովհաննիսյանի անվամբ Շիրակի մարզ քաղաք Գյումրի Մ.Ավետիսյան փողոց 11 շենք 6 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք: 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ քաղաք Գյումրի Մ.Ավետիսյան փողոց 11 շենք 6 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ: Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2022 թվականի հուլիսի 27-ի Շ-2069/4213/301 գրությունը, Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2023 թվականի մայիսի 16-ի N -8/63-435 գրությունը, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի մայիսի 8-ի N 896 տեղեկանքը, Սիլվա Հովսեփի Խաչատրյանի անձնագրի պատճենը, Մուրադ Տիգրանյանյան անհատական ձեռնարկության 2022 թվականի օգոստոսի 15-ի եզրակացությունը, «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի մայիսի 8-ի տեղեկանքը, Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 5-ի թիվ 878-Ա որոշումը, Սիլվա Հովսեփի Խաչատրյանի լիազորագիրը Գյումրի համայնքից Ավզնոց փողոց թիվ 69 հասցեի բնակելի տան սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդհոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2022 թվականի հոկտեմբերի 19-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի մայիսի 31-ը, դիմումատուն պատշաճ կարգով

ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Սիլվա Հովսեփի Խաչատրյանի լիազորված անձ՝ Արմեն Ջուլբերտի Խոցանյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ավզնոց փողոց թիվ 69/2 հասցեի 48.24 (քառասունութ ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ N 05052023-08-0015 վկայական) :

բ) Գյումրու /Լենինականի/ Ավզնոց փողոցի թիվ 69 ֆոնդի տան հատկացման նյութերը չեն պահպանվել (հիմք ՝«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2022 թվականի հուլիսի 27 –ի Շ-2069/4213/301 գրություն):

գ) Շիրակ Գյումրի Ավզնոց փողոց 69 հասցեում հաշվառված բնակվում է Սիլվա Հովսեփի Խաչատրյանը 1979 թվականից: Նշված հասցեում առկա է 3 տնատիրություն և հաշվառված է 8 անձ (հիմք՝ Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2023 թվականի մայիսի 16-ի N -8/63-435 գրություն, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի մայիսի 8-ի N 896 տեղեկանք):

դ) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ավզնոց թիվ 69 տան վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի, տեխնիկական վիճակը՝ բավարար, այն է՝ պահանջվում է կատարել տան հարդարանքի նորոգում՝ վնասված տարրերի վերականգնումով (հիմք՝ Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2022 թվականի օգոստոսի 15-ի եզրակացություն):

ե) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացի Սիլվա Հովսեփի Խաչատրյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և նրա կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի մայիսի 11-ի N ԱՏ-11052023-99-0464 տեղեկանք):

զ) Քաղաքացի Սիլվա Խաչատրյանը /ք. Գյումրի, Ավզնոց փողոց 69 տուն/ Գյումրի էլ.ցանցում ենթաբաժանորդ է հանդիսանում Սուսաննա Սարգսյանին մինչև օրս (հիմք՝ «ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի մայիսի 8-ի տեղեկանք):

է) Գյումրի քաղաքի Ավզնոց փողոցի հարևանությամբ գտնվող 48.24 քառակուսի մետր մակերեսով բնակելի ֆոնդի տանը և դրա փաստացի զբաղեցրած 61.14 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրվել է հասցե՝ Գյումրի ք. Խ. Ավզնոց փողոց, 69/2 (հիմք՝ Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի N 878-Ա որոշում):

ը) Քաղաքացի Սիլվա Հովսեփի Խաչատրյանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝

օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է

Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Սիլվա Հովսեփի Խաչատրյանի լիազորված անձ՝ Արմեն Ջուլբերտի Խոցանյանի դիմումը բավարարել:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ավզնոց փողոց թիվ 69/2 հասցեի 48.24 (քառասունութ ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝
   1) Սիլվա Հովսեփի Խաչատրյանին ծնված 1949 թվականին

   որպես սեփականություն:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել քաղաքացի՝ Սիլվա Հովսեփի Խաչատրյանի հետ նվիրատվության պայմանագրի կնքման համար ներկայացուցիչ:
3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Սիլվա Հովսեփի Խաչատրյանին:
4. Քաղաքացի՝ Սիլվա Հովսեփի Խաչատրյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Սիլվա Հովսեփի Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

2023թ. Գյումրի համայնք

06.06.2023

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» մարտի 2023 **թվական** N 1406 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՎԱՐԴԱՆ ԼՅՈՎԱՅԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ, ԼՅՈՎԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ԼԻՊԱՐԻՏԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ, ՄԿՐՏԻՉ ԼՅՈՎԱՅԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Վարդան Լյովայի Ղազարյանը (նույնականացման քարտ՝ 013053384, տրված՝ 23.02.2022թ. 064-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Մատնիշյան փող. 53 շենք 4 բնակարան հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի ապրիլի 4-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Մատնիշյան փող. 53 շենք թիվ 4 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Լենինականի Շիրակի շրջսովետի գործկոմի 1986 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 16 որոշմամբ Օրջոնոկիձե (ներկայիս Մատնիշյան) փողոց 53 շենքի թիվ 4 բնակարանը հատկացվել է Մարիամ Սերոբի Ղազարյանի 6 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, տղային, հարսին և 3 թոռանը (հիմք՝ « Լենինականի Շիրակի շրջսովետի գործկոմի 1986 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 16 որոշմամբ տրված թիվ 1 միասնական օրդեր):

Քաղաքացի Մարիամ Սերոբի Ղազարյանը մահացել է 1993 թվականի սեպտեմբերի 6-ին (հիմք՝ II-ՀՄ N 457141 մահվան վկայական):

Դիմումին կից ներկայացվել է՝ Լենինականի Շիրակի շրջսովետի գործկոմի 1986 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 16 որոշմամբ տրված թիվ 1 միասնական օրդերը, 2023 թվականի մարտի 31-ի Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի N 8/62-581 գրությունը, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի ապրիլի 4-ի տեղեկանքը, Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մարտի 14-ի եզրակացությունը, Լյովա Հովհաննեսի Ղազարյանի լիազորագիրը Գյումրի հանայնքից ք. Գյումրի Ս. Մատնիշյան փողոց 53 շենք թիվ 4 հասցեի բնակարանի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին, Վարդան Լյովայի Ղազարյանի նույնականացման քարտի, Հովհաննես Լյովայի Ղազարյանի, Մկրտիչ Լյովայի Ղազարյանի, Սուսաննա Լիպարիտի Ղազարյանի անձնագրերի պատճենները :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի ապրիլի 4-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի մայիսի 31-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Վարդան Լյովայի Ղազարյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ս.Մատնիշյան փողոց 53 շենք, թիվ 4 հասցեի 60.1 (վաթսուն ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված է Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ N 21042023-08-0030 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Օրջոնոկիձե (ներկայիս Մատնիշյան) փողոց 53 շենքի թիվ 4 բնակարանը 1986 թվականի հոկտեմբերի 28-ից հանձնված է բնակության (հիմք՝ Լենինականի Շիրակի շրջսովետի գործկոմի 1986 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 16 որոշում):

գ) Ք. Գյումրի Մատնիշյան փ. 53 շենք 4 հասցեում հաշվառված են՝ Լյովա Հովհաննեսի Ղազարյանը 1997 թվականից,Սուսաննա Լիպարիտի Ղազարյանը 1979 թվականից, Վարդան Լյովայի Ղազարյանը 1997 թվականից, Հովհաննես Լյովայի Ղազարյանը 1993 թվականից, (հիմք՝ 2023 թվականի մարտի 31-ի Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի N 8/62-581 գրություն և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի ապրիլի 4-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Լյովա Հովհաննեսի Ղազարյանի, Սուսաննա Լիպարիտի Ղազարյանի, Վարդան Լյովայի Ղազարյանի, Հովհաննես Լյովայի Ղազարյանի, Մկրտիչ Լյովայի Ղազարյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ: Հովհաննես Լյովայի Ղազարյանի կողմից անշարժ գույքի ձեռքբերման միաժամանակ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ, քաղաք Գյումրի Տիգրան Մեծի փողոց 8 շենք 66 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի մարտի 9-ի N ԱՏ-09032023-99-0301, 2023 թվականի մարտի 27-ի N ԱՏ-27032023-99-0418, N ԱՏ-27032023-99-0421, 2023 թվականի մարտի 23-ի N ԱՏ-23032023-99-0382, N ԱՏ-23032023-99-0381 տեղեկանքներ):

ե) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ս.Մատնիշյան փողոց 53 շենքի ընդհանուր վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի:Շենքի կրող համակարգը գտնվում է բավարար վիճակում:Շենքի առաջին հարկում գտնվող թիվ 4 հասցեով բնակարանը պիտանի է շահագործման համար (հիմք՝ Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մարտի 14-ի եզրակացություն):

զ) Քաղաքացի Վարդան Լյովայի Ղազարյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Մատնիշյան փողոց 53 շենքի թիվ 4 բնակարանը վարձակալել է 1986 թվականի հոկտեմբերի 28-ից այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի

26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1 -ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝

նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Քաղաքացի Հովհաննես Լյովայի Ղազարյանի կողմից անշարժ գույքի ձեռքբերման միաժամանակ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ, քաղաք Գյումրի Տիգրան Մեծի փողոց 8 շենք 66 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ :Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական վարույթը քաղաքացի Վարդան Լյովայի Ղազարյանի դիմումը բավարարեց մասամբ :

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ս.Մատնիշյան փողոց 53 շենք, թիվ 4 հասցեի 60.1 (վաթսուն ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

   1) Վարդան Լյովայի Ղազարյանին ծնված՝ 1980 թվականին,
   2) Լյովա Հովհաննեսի Ղազարյանին ծնված՝ 1952 թվականին,
   3) Սուսաննա Լիպարիտի Ղազարյանին ծնված՝ 1957 թվականին,
   4) Մկրտիչ Լյովայի Ղազարյանին ծնված՝ 1977 թվականին,

   որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել քաղաքացիներ՝ Վարդան Լյովայի Ղազարյանի, Լյովա Հովհաննեսի Ղազարյանի, Սուսաննա Լիպարիտի Ղազարյանի, Մկրտիչ Լյովայի Ղազարյանի հետ նվիրատվության պայմանագրի կնքման համար ներկայացուցիչ:
3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Վարդան Լյովայի Ղազարյանին, Լյովա Հովհաննեսի Ղազարյանին, Սուսաննա Լիպարիտի Ղազարյանին, Մկրտիչ Լյովայի Ղազարյանին:
4. Քաղաքացիներ՝ Վարդան Լյովայի Ղազարյանին, Լյովա Հովհաննեսի Ղազարյանին, Սուսաննա Լիպարիտի Ղազարյանին, Մկրտիչ Լյովայի Ղազարյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Վարդան Լյովայի Ղազարյանին, Լյովա Հովհաննեսի Ղազարյանին, Սուսաննա Լիպարիտի Ղազարյանին, Մկրտիչ Լյովայի Ղազարյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

Ք.Գյումրի,2023թիվ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հունիսի 2023 **թվական** N 1405-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԺԵԼԱ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Անժելա Վլադիմիրի Ղազարյանը (նույնականացման քարտ՝ 011422094, տրված՝ 016-ի կողմից 19.10.2021թ., հաշվառված՝ ք. Գյումրի,Իսահակյան փող.2 շենք թիվ 16 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի մայիսի 26-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Իսահակյան փողոց 2 շենք թիվ 16 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել՝ իրեն որպես սեփականություն:

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի մայիսի 19-ի գրությունը, 2023 թվականի մայիսի 5-ի բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին թիվ 230163016426 տեղեկանքը, «Շիրակ» համատիրության 2023 թվականի մայիսի 5-ի տեղեկանքը, Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մայիսի 12-ի եզրակացությունը, 2023 թվականի մայիսի 17-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Գյումրի» ցանցի փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, Անժելա Վլադիմիրի Ղազարյանի նույնականացման քարտի պատճենը :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2- րդ մասի,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի մայիսի 26-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի մայիսի 31-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Անժելա Վլադիմիրի Ղազարյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ա.Իսահակյան փողոց 2 շենք, թիվ 16 հասցեի 39.77 (երեսունիննը ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 19052023-08-0035 վկայական):

բ) Գյումրու /Լենինականի/ Իսահակյան փողոցի 2 շենքի թիվ 16 հասցեի բնակարանի հատկացման նյութերը չեն պահպանվել (հիմք՝«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի մայիսի 19-ի գրություն):

գ) Շիրակ Գյումրի Ա. Իսահակյան փողոց 2 շենք թիվ 16 հասցեում հաշվառված է քաղաքացի՝ Անժելա Վլադիմիրի Ղազարյանը 1923 թվականից (հիմք՝ 2023 թվականի մայիսի 5-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ թիվ 230163016126 տեղեկանք, «Շիրակ» համատիրության 2023 թվականի մայիսի 5-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացի Անժելա Վլադիմիրի Ղազարյանի անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում որևէ անշարժ գույքի նկատամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ,1998 թվականի մարտի 1-ից մինչև օրս նրանց կողմից կնքված անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի մայիսի 10-ի N ԱՏ-10052023-99-0397 տեղեկանք):

ե) Գյումրու Իսահակյան փողոց 2 շենքի ընդհանուր վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի:Շենքի կրող համակարգը գտնվում է բավարար վիճակում: Շենքի նիջին մուտքի առաջին հարկում հարկում գտնվող թիվ 16 հասցեի բնակարանը պիտանի է շահագործման համար (հիմք՝ Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մայիսի 12-ի եզրակացություն):

զ)Քաղաքացի Անժելա Ղազարյանը /ք. Գյումրի, Իսահակյան փող. 2 շենք, 16/18 բն./ «Գյումրի» ցանցում 2014 թվականից մինչև օրս հանդիսանում է բաժանորդ (հիմք՝ 2023 թվականի մայիսի 17-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Գյումրի» ցանցի փոխադարձ հաշվարկների ստուգման ակտ):

է) Քաղաքացի Անժելա Վլադիմիրի Ղազարյանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի -ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Անժելա Վլադիմիրի Ղազարյանի դիմումը բավարարել:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ա.Իսահակյան փողոց 2 շենք, թիվ 16 հասցեի 39.77 (երեսունինները ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

1) Անժելա Վլադիմիրի Ղազարյանին ծնված 1963 թվականին

որպես սեփականություն :

2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել քաղաքացի Անժելա Վլադիմիրի Ղազարյանի հետ նվիրատվության պայմանագրի կնքման համար ներկայացուցիչ:
3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Անժելա Վլադիմիրի Ղազարյանին :
4. Քաղաքացի՝ Անժելա Վլադիմիրի Ղազարյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Անժելա Վլադիմիրի Ղազարյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

2023թ. Գյումրի համայնք

Недействительная подпись

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» հունիսի 2023 թվականի N 1404-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 115/1 ՀԱՍՑԵԻ 1.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Թումանյան փողոցի N 111 հասցեի բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Տիգրան Ավագի Տիգրանյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 04072022-08-0009 վկայական):

Գյումրի քաղաքի Թումանյան փողոցի N 115/1 հասցեի 1.0 (մեկ) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 12052023-08-0014 վկայական):

Քաղաքացի Տիգրան Ավագի Տիգրանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Թումանյան փողոցի N 111 հասցեի բնակելի տանը կից Թումանյան փողոցի N 115/1 հասցեի 1.0 (մեկ) քառակուսի մետր մակերեսով հողամասն աստիճաններ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Նկատի ունենալով փաստացի իրադրությամբ պայմանավորված քաղաքաշինական հնարավորությունը, հաշվի առնելով, որ տրամադրված հողամասը գտնվում է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 48[1]-րդ հոդվածի 6-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 3-րդ կետի «ա» ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Տիգրան Ավագի Տիգրանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 16-ին N 9216 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Տիգրան Ավագի Տիգրանյանին աստիճաններ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Թումանյան փողոցի N 115/1 հասցեի 1.0 (մեկ) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը 10 (տասը) տարի ժամկետով և տարեկան վարձավճարի չափ սահմանել 2200 (երկու հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սահմանված կարգով կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր (պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժին):
   1) Պարտավորեցնել քաղաքացի Տիգրան Ավագի Տիգրանյանին.
   2) Աստիճաններ կառուցելու համար սահմանված կարգով Գյումրի համայնքի ղեկավարին ներկայացնել հաստատված ձևի հայտ ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար:
   3) Համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա Հայաստանի Հանրապետության «Քաղաքաշինության մասին» օրենքի և այլ նորմատիվ, իրավական փաստաթղթերի պահանջների համաձայն, սեփական միջոցներով պատվիրել նախագծային փաստաթղթեր ու սահմանված կարգով ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինթույլտվություն:

4) Շինաշխատանքները նախագծով սահմանված ժամկետներում ավարտելուց հետո շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

3. Պայմանագրի նոտարական վավերացումը և պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցումը կատարել քաղաքացի Տիգրան Ավագի Տիգրանյանի միջոցների հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Տիգրան Ավագի Տիգրանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.06.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 06 >> հունիսի 2023 թվականի N 1403 -Ա

<< ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ >> ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ԵՐԱՆ ԺԻՐԱՅՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով << Զարթոնք >> խմբակցության ղեկավար Վարդևան Սամվելի Հակոբյանի, << Ապրելու երկիր >> խմբակցության ղեկավար Կարեն Ծառուկի Մալխասյանի զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. << Ապրելու երկիր >> խմբակցության փորձագետ Երան Ժիրայրի Գրիգորյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափի 50 (հիսուն) տոկոսի չափով:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երան Ժիրայրի Գրիգորյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.06.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 06 >> հունիսի 2023 թվականի N 1902-Ա

<< ՁԱՐԹՈՆՔ >> ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ՌՈՄԻԿ ՄԵՍՐՈՊԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով << Ձարթոնք >> խմբակցության ղեկավար Վարդևան Սամվելի Հակոբյանի, << Ապրելու երկիր >> խմբակցության ղեկավար Կարեն Ծառուկի Մալխասյանի զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. << Ձարթոնք >> խմբակցության փորձագետ Ռոմիկ Մեսրոպի Հովհաննիսյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափի 50 (հիսուն) տոկոսի չափով:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռոմիկ Մեսրոպի Հովհաննիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.06.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 06 >> հունիսի 2023 թվականի N 1401-Ա

<< ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԴԱՇԻՆՔ >> ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ՍԻՐԱՆՈՒՇ ԱԼԲԵՐՏԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով << Զարթոնք >> խմբակցության ղեկավար Վարդևան Սամվելի Հակոբյանի, << Ապրելու երկիր >> խմբակցության ղեկավար Կարեն Ծառուկի Մալխասյանի զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. << Բալասանյան դաշինք >> խմբակցության փորձագետ Սիրանուշ Ալբերտի Հակոբյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափի 50 (հիսուն) տոկոսի չափով:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սիրանուշ Ալբերտի Հակոբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.06.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 06 >> հունիսի 2023 թվականի N 1900-Ա

<< ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ >> ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ԼՈՒՍԻՆԵ ՍԱՄՎԵԼԻ ՊԱՂՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով << Զարթոնք >> խմբակցության ղեկավար Վարդևան Սամվելի Հակոբյանի, << Ապրելու երկիր >> խմբակցության ղեկավար Կարեն Ծառուկի Մալխասյանի զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. << Քաղաքացիական պայմանագիր >> խմբակցության փորձագետ Լուսինե Սամվելի Պողոսյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափի 50 (հիսուն) տոկոսի չափով:

2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լուսինե Սամվելի Պողոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.06.2023

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

Ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 06 >> հունիսի 2023 թվականի N 1399-Ա

<< ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ >> ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ՏԻԳՐԱՆ ԵՐՎԱՆԴԻ ԱԹՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով << Զարթոնք >> խմբակցության ղեկավար Վարդևան Սամվելի Հակոբյանի, << Ապրելու երկիր >> խմբակցության ղեկավար Կարեն Ծառուկի Մալխասյանի զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. << Հանրապետական >> խմբակցության փորձագետ Տիգրան Երվանդի Աթոյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափի 50 (հիսուն) տոկոսի չափով:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տիգրան Երվանդի Աթոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.06.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի